№ 46 ԵՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՄԱՐՏԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ՝ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ, 3 ՄԱՐՏԻ № 46

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ
(44-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի, Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պէտք է վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ թէ 40 կոպ. նամականիշ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կլինեն 10 ռ. բաժանորդավճարը կը ստանան որպէս պրէմիա հետևեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Ծանչվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դոկումենտներով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՈՎԻ ԱՆՈՒԱՆ)

Այսօր, երեքշաբթի,
մարտի 3-ին
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Կը ներկայացնէ

Նապոլէոնի ուրախ օրը
Կոմէդիա 1 գործ. Թարգմ. Թորոսեանի

II

Օսկան Պետրովիչը դժոխքում
Վօդևիլ 1 գործ. հեղ. Սունդուկեանի
Օսկան, դժոխքում հանդիպում է «Էնվէր փաշային» եւ «Վիլհէլմին»

III

ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ
I Անցեալը. II Ներկան. III Ապագան.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Աբովեան, Գրիգորեան, Եասմիկ, օր. Արծրունի, պ. պ. Ամօ-Խարազեան, Աղաբաբեան, Արամ, Բագրատունի, Գալստեան, Գուրեան, Գուլանջեան, Ելիզբարեան, Լազարեան, Մարութեան, Ռուսեան, Սերժ, Օդաբաշեան, Օհանեան և ուրիշ.։

Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին։
Ռեժիսսոր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
տ. Վ. ՄԱՄՈՒԼԵԱՆ և Ե. ԽԱՐԱԶԵԱՆ

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Օգուտ «Մշակի» ֆոնդի
հետևեալ գրքերը.

1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ռ.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՅԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամա 5 գ. Ալ. Առաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի» յոբելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ռ.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ռ.

Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։ 2. 0—2

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաբաթեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2.
(եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սոլոլակ, Ռուդչենկովսկայա փ. № 1.
Հեռախոս 10—58.
(Ն.Ն.Կ.) առ. 784. 100—72

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

«ՄՇԱԿԻ» ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

—o—

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Սեփական հեռ.)

Էջմիածին, 1 մարտի

Փախստականներին օգնութիւն կազմակերպող համագումարի ներկայացուցիչներ են եկել 22 հոգի։ Կոնդակով նշանակված՝ Կաթողիկոսի ներկայացուցիչ Յուսիկ արքեպիսկոպոսը պատարագից յետոյ ընդունեց համագումարի անդամներին։ Նորին Սրբութիւնը շնորհակալութիւն յայտնելով նրանց, խորին ցաւ յայտնեց հայ ժողովրդին հասած աղէտի համար և հրաւիրեց ընդհանուր համաձայնութեամբ մշակել փախստականների օգնութեան և նրանց հայրենիք վերադարձնելու ծրագիր։ Առաջին նիստը կը լինի այսօր երեկոյեան։ Համագումարը ունի խորհրդակցական բնոյթ։ Որոշումները ենթարկվելու են Վեհափառի սանկցիային։

Հ. Առաքելեան

—

(Պատահական)

Հին-Նախիջևան, 1 մարտի

Փախստական ասորիների և հայերի կողմից խորին շնորհակալութիւն եմ յայտնում Կովկասի գլխաւոր կոմիտէտին յանձին նրա ներկայացուցիչ Պաւլովի, նահանգապետ Տրզեննհաուզէնին՝ 9000 ռ. ուղարկելուն համար, Հին-Նախիջևանի գաւառի հաշտարար միջնորդներ Րժեւուսկովիչին, Ցվետկովին, Խան-Նախիջևանսկիին՝ փախստականների ապահովութեան համար գաւառը շրջելուն և նրանց մինչև ապրիլի 1-ը պահելուն համար. Շարուրդարալագեազի գաւառապետ Նարբեկովին, գաւառի առաջին երեք մասերի հաշտարար միջնորդներին՝ նոյն ծառայութիւնների համար. Թիֆլիսի հայ կանանց կոմիտէտին՝ փախստականների համար երկու անգամ տաք իրեր ուղարկելու առիթով։

Ներսէս եպիսկոպոս

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

28 փետրվարի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Փետրվարի 28-ին Անդրճորոխեան շրջանում կռիւը տեղի էր ունենում լայն զօրաճակատում։ Թիւրքերն ամենուրեք վանվեցին։

Ալաշկերտի հովտում մեր զօրքերը, քիւրդերի հետ ընդհարում ունենալուց յետոյ, ցիրուցան արին նրանց դէպի հարաւ։

Մնացած ուղղութեամբ օրը հանգիստ անցաւ։

—

1 մարտի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Փետրվարի 28-ին Անդրճորոխեան երկրում մեր զօրքերը, տիրելով Ջանսուլի գործարանը և դէպի Խոփա տանող ճանապարհը, խիզախօրէն առաջանում են, վանելով Թիւրքերին իրանց դիրքերից։

Թիւրքերը փորձեցին մի քանի անգամ յարձակման դիմել մի քանի ուղղութեամբ, բայց մեր զօրքերը թոյլ չը տուին։

ԴԱՐԴԱՆԷԼԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

27—28 փետրվարի

ՓԱՐԻԶ.—Ծովային մինիստրութիւնը յայտարարում է.

Փետրվարի 27-ի ցերեկը աննպաստ եղանակի ժամանակ անգլիական 2 ռազմանաւ ռմբակոծեցին Բուլայիրի ամրութիւնները։ Միևնոյն ժամանակ անգլիական 2 զրահանաւ ռմբակոծեցին թեթև թնդանօթներից բաղկացած հրետանին, որ գտնվում է Մօրտօ նաւահանգստում՝ Դարդանէլի նեղուցի մուտքի մօտ։

Լոյս փետրվարի 26-ի գիշերը ականորս նաւերը մտան նեղուցը զրահանաւի և յածանաւի կրակի պաշտպանութեամբ, և, չը նայած ափի մարտկոցների ուժեղ կրակին, նրանց աջողվեց մաքրել ճանապարհը ականների առաջին շարքից։

Փետրվարի 26-ին ֆրանսիական ծովային զօրամասը վերսկսեց իր գործողութիւնները Բուլայիրի ամրութիւնների դէմ Մօրտօ նաւահանգստի վրա գտնվող դաշտային թնդանօթներից։

ԱԹԷՆՔ.—Դարդանէլի ներքին բերդերի՝ Համիդիէի, Գալիդիէի և Կինէմալէկի ռմբակոծութիւնը շարունակվում է դանդաղ, բայց յամառ կերպով, որ չափով թոյլ է տալիս ժամանակը։

Փոքրիկ նաւերով շարունակ ականները որսում են. երեք մղոն տարածութեամբ ականները որսացված են։

«Թագուհի Ելիզաբէթ» գերդրէդնօուտը առանձնապէս խիստ վնասեց Համիդիէ բերդերը ասիական մասում, որոնք պաշտպանում են Դարդանէլ քաղաքը և որոնց վրա դրված են 9 նոր 24 և 25 սանտիմետրանոց թնդանօթներ։

Վերջին տեղեկութիւնների համաձայն, նեղուցը պաշտպանող թիւրք զօրքերի թիւն է, Փոքր-Ասիայից բերված զօրքերի հետ միասին, 30,000 մարդուց ոչ աւելի։

Հաղորդում են, որ դաշնակից նաւատորմը կործանել է Զմիւռնիայի ամրութիւնները։ Մանր նաւերը ականներ են որսում նաւահանգստի մուտքի մօտ. Ներկայումս ռմբակոծվում է Չիֆլիկ բերդերը։ Զմիւռնիայի զինուորական իշխանութիւնները մի շարք թնդանօթներ են դրել ծովափին, ուր ապրում են քրիստոնեաները, ստիպելով այդպիսով նրանց տեղափոխվել քաղաքի ներսը։

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ Կ. ՊՕԼՍՈՒՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետրվարի

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Կ. Պօլսից հեռագրում են. Պալատում կայացաւ մինիստրների խորհրդակցութիւն ֆօն-դէր-Գօլց փաշայի, Լիմանի, ֆօն-Սանդէրսի և մի քանի բարձրաստիճան պաշտօնեաների մասնակցութեամբ։ Խորհրդակցութիւնը գումարվել էր Դարդանէլի ռմբակոծութեան պատճառով։

Ֆօն-դէր-Գօլց փաշան ընդարձակ ճառով յայտնեց, թէ անհրաժեշտ է գործել զգոյշ, ասելով որ գերմանական զինուորական միսսիան բոլոր միջոցները երևան կը հանէ և իր զինուորական բովանդակ շնորհքը կը գործադրէ, որպէսզի արգելք լինի անգլօ-ֆրանսիական նաւատորմին մտնել Մարմարա ծովը։—Սակայն, աւելացրեց նա,—եթէ չը նայած բոլոր ջանքերին՝ թշնամու նաւատորմը մտնէ Մարմարա ծովը, այն ժամանակ անօգուտ կը լինի դիմադրել Կ. Պօլսում, ուստի այդ դիմադրութիւնը զուրկ է գործնական նշանակութիւնից։ Բնական է, որ նեղուցի պաշարմամբ և Կ. Պօլսի գրաւմամբ Թիւրքիայի դերը ներկայ պատերազմում չէ վերջանում։ Պետութիւնների վիճակը կը լուծվի Եւրոպայի կռուի դաշտերում, ուր Գերմանիան և նրա դաշնակիցները կը թելադրեն հաշտութեան պայմանները։ Թիւրքաց կառավարութիւնը Փոքր Ասիա փոխադրելով չէ նշանակում, թէ Թիւրքիան դադարեցնում է ռազմական գործողութիւնները, եւ առաւել, որ Կ. Պօլսի գրաւումը,—աւարտեց ֆօն-դէր-Գօլց փաշան,—միայն ժամանակաւոր կը լինի։

Մեծ վէզիրը ընդգծեց այն բարոյական տպաւորութիւնը, որ կը ստիպէ մայրաքաղաքի ազգաբնակութեանը հեռանալ, և միացաւ ֆօն-դէր-Գօլց փաշայի այն կարծիքին, թէ Թիւրքերի դիմադրութիւնը Գալիպօլիում վերին աստիճանի յամառ կը լինի, և որ սուլթանը և կառավարութիւնը կը հեռանան մայրաքաղաքից միմիայն ամենավերջին րոպէին։

Էնվէր-փաշան հանդէս չը գալով բացարձակօրէն ֆօն-դէր-Գօլց-փաշայի կարծիքի դէմ, բայց այնպէս բացատրեց, որ անհրաժեշտ է դիմադրութիւն ցոյց տալ Կ. Պօլսի շրջակայքում, ուր կենտրոնացած են մեծանակ զինուորական ուժեր։

Ոչ մի վերջնական վճիռ խորհրդակցութեան մէջ չընդունվեց, ի նկատի ունենալով դաշնակից նաւատորմի գործողութիւնների անորոշութիւնը Դարդանէլում։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

1 մարտի

ԲՈՒԽԱՐԷՍՏ — «Գեբէնը», որ գտնվում է Բօսֆորի նաւաշինարանում, խիստ հսկողութեան տակ է։ Վերջին ժամանակ, «Գեբէնի» շուրջ կանգնած էին քարածուխ բեռնած շատ մանր նաւեր։ Ենթադրում են, որ «Գեբէնը» շուտով կը նորոգվի և ծով կելնէ։

Գերմանիայից Կ. Պօլիս են եկել մօտ 50 մեքենագործ օֆիցեր։

ԹԱԹԱՐՆԵՐԻ ԱՒԵՐԱԾՆԵՐԸ

(Յեփ. Թղթակցից)

I

Արարատեան աշխարհի գարունն արդէն հասել է։ Արևը արդէն բողբոջեցրել է ոչ միայն աշնան ցանքը, բարձրացրել է երեք մատնաչափ, այլ ծառերն անգամ ծիլ են տուել։ Յունվարի սառնամանիքի հետքն անգամ չի մնացել Իգդիրում և զարմանալի է, որ այնքան արագ վերացել է ձիւնն ու սառույցը ամբողջ Արարատեան դաշտից։

Եւ նախկին դանդաղկոտ Իգդիրը չի մնացել, նա բոլորովին կերպարանափոխվել է։ Այստեղ, որ առաջ միմիայն կը տեսնէիք ոստիկաններ, քիւրդ պահակներ և մռայլադէմ հայեր, այժմ այդ բոլորը երկրորդ-երրորդական տեղ են գրաւել։ Ամէն քայլափոխին նկատում է մարդ ռուս զինուորին ու կոզակին, հետևակին ու հեծելազօրին, օֆիցեր ու զօրական, բժիշկ և գթութեան քոյր, զինուորական քառաձի ֆուրգոններ, աւտոմոբիլներ, թնդանօթներ և մթերատար կառքեր։ Կեանքը եռում է, անվերջ գնում են, գալիս են, անվերջ մթերք են կրում դէպի «զուլումի երկիրը»։

Ալաշկերտի դաշտը, Պատնոցը, Անթաբը, Բայազիդը, Բասէնն ու Մանազկերտը, որոնք կարող են կերակրել իրանց արգաւանդ և բարեբեր դաշտերում, հովիտներում ու ձորերում երեք միլիոն ժողովուրդ, այսօր շնորհիւ թաթարական կործանող ձեռքերի և քիւրդական աւարառու հրոսակների՝ այնպէս է ամայացել, սնանկացել, որ ոչ միայն անկարող է պաշար տալ մեր բանակին, այլ մինչև անգամ չի կարողանում սնուցանել իր սակաւաթիւ, 150,000 ժողովրդին, չի կարողանում կշտացնել իր սոված ազգաբնակութեան, և մեր զօրքերն ու զօրականները բացի պատերազմի հոգսերից, մեր զօրքի սնունդի մասին կրկնակի հոգածութիւնից, պարտաւորվել են նորանուաճ երկրի ազգաբնակութեանը սնունդ մատակարարելու մասին էլ մտածել։

Եւ նոյնիսկ ուղտի կարաւանները այլևայլ պարէն են տանում Ալաշկերտ, Կարաքիլիսէ և Թութակ (Դողախ), որպէսզի թէ մեր զօրքը կերակրվի և թէ տեղական ազգաբնակութիւնը սովի չը մատնվի։ Բաւական չեն մեր զինուորական մթերակիր բազմաթիւ քառաձի ֆուրգոնները, մոլոկաններից և ուրիշ ազգաբնակութիւններից վարձված ֆուրգոնները, մեծ քանակութեամբ ուղտեր էլ են գործածում, բայց պահանջն այնքան մեծ է, որ դարձեալ չի կարելի բաւարարել։

Պէտք է գնալ, աչքով տեսնել, որպէսզի մարդ կարողանայ գաղափար կազմել։

Եթէ նկատի առնենք և այն պարագան, որ մեր երկրից դուրս Ալաշկերտում ոչ միայն շօսսէ, այլ որևէ անուային (КОЛЕСНЫЙ) ճանապարհ էլ չը կայ, այն ժամանակ միայն կարելի կը լինի գաղափար կազմել, թէ ի՞նչ տաժանելի աշխատանք է Իգդիրից մինչև Ալաշկերտ մթերք հասցնելը։ Եւ եթէ այս պարագայի վրա աւելացնենք Իգդիրից մինչև Զարասլա լեռները բարձրանալու, ապա դէպի Դիադին (Դիատոնք) իջնելու նեղութիւնները, այն ժամանակ հնարաւոր կը լինի մի աղօտ ըմբռնման հասնել։ Պէտք է աւելացնել մանաւանդ փետրվար ամսի եղանակների էլ ազդեցութիւնը. դաշտում տօթ է ու չոր, սարալանջերին ձիւնը հալված է ցեխ է ու կպչող հող, իսկ բարձունքներում ձիւն ու սառոյց։

Իգդիրից առաջին օրը ֆուրգոնը կամ կարաւանը հասնում է Արծափ գիւղը նախկին սահմանի մօտ, որը յայտնի է իր սրբատաշ հսկայական բոլորակ տաճարի աւերակներով, որը իր նմանը չունի ամբողջ Բայազիդի սանջակում։ Երկրորդ օրը հասնում է Դիադին, երրորդ օրը Տաշլի-չայ և միայն չորրորդ օրը Կարաքիլիսէ և Թօփրակ-Կալէ (Ալաշկերտ)։ Եւ այս տաժանելի ճանապարհով ինչպէս դեկտեմբերի սառնամանիքին փախաւ և պատսպարվեց Արծափի հովանու տակ թշուառ ալաշկերտցին, այնպէս էլ այսօր նա կամաց-կամաց վերադառնում է իր ծննդավայրը, իր պապական օջախը վառելու, գութանը լծելու, արտը վարելու, պատրաստութիւնը տեսնելու՝ որ աշնանը դարձեալ պարտաւորված չը լինի ձեռք մեկնել և ողորմութեամբ քարշ տալ իր չարատանջ կեանքը։

Բայց կեանքի դառնութիւնները փորձառու են դարձրել հայ գեղջուկին. նա գնում է, թողնելով պատսպարանում իր ընտանիքը, երեխաներն ու պառաւները, քանի որ նա չի վստահում կեանքի դառն փոփոխութիւններին։ Պատերազմի ռումբերն ու գնդակները, քիւրդի սուրն ու ասկեարի սուինը նրան այնպէս են սարսափեցրել, որ նա չի կամենում թոյլ արարածներին կրկին վտանգի մատնել։ Նա չի վախենում մահից, նա չի սոսկում քիւրդի դաշոյնից. նրան կաշկանդում են ճժերն ու կիները, և նա այդ ծանրութիւնը թողնում է իրան պատսպարող և հովանաւորող երկրում, մինչև որ խաղաղութիւնը վերադառնայ։ Մանաւանդ որ ծննդավայրում գեղջուկի գոյքը, ամբարն ու մառանը, ախոռն ու փարախը ցրել ու տարել են քիւրդերն ու Թիւրքերը։ Ինչո՞վ պէտք է նրանց կերակրէ այն աւերված երկրում։

Սոսկալի է քաղցը երկրում, այնպիսի ծայրայեղութեան է հասել, որ սովածները չեն կարողանում այնտեղ մնալ։ Թէև մի կողմից տղամարդիկ ամեն միջոցի դիմում են, վերադառնում են ծննդավայր՝ իրանց աշնան պատրաստութիւնը տեսնելու, միւս կողմից բանակի ֆուրգոնները դեռ մեր կողմն են կրում այն բոլոր անտէր երեխաներին, կիներին, ծերերին ու պառաւներին, որոնք ոչ միայն անխնամ են մնացել, այլ ենթարկվել են սովի տանջանքներին։ Այսօր ես պատահեցի Իգդիրի փողոցում վեց ֆուրգոն այդպիսի գաղթականների, որոնց ճակատին իրանց դաժան կնիքն էին դրել սովն ու ցուրտը։ Այնպէս դալկացել, նիհարել էին այդ թշուառները, որ կարծես թէ գերեզմաններից դարձած լինէին։ Տանջված, նրանց տպաւորութիւնը այնքան խիստ էր, որ մարդ չէր կարող նրանց մօտենալ, առանց յուզվելու խօսել և լսել։ Նրանց դէմքը որքան որ մռայլ էր, այնքան սոսկալի էր նրանց հագուստը, գլխի կապերը՝ պատառոտուն, կեղտոտ և գզգզված։ Ակամայ մարդ խուսափում է նրանց պատահելուց։

Իգդիր — Ատրպետ

ԹՈՒՐՔ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱԽՏԸ ԵՒ Կ. ՊՕԼՍԻ ՀԱՐՑԸ

II

Նուաճել Պօլիսը՝ նշանակում է համարեա վերջակէտ դնել Թիւրքիայի հետ ունեցած պատերազմին։ Իսկ դա նշանակում է, իր հերթին, բեկանել Գերմանիայի զինակցի ուժը, խլեցնել Վիլհէլմի շտաբների ուռած տրամադրութիւնների բարոմետրը, հարուածել Բեռլինի կաբինետի քողարկված իլլիւզիաների շէնքը։ Այդ է պատճառը, որ Պօլսի նուաճումը կարելի է սեպել համաեւրոպական պատերազմի ամենախոշոր ու վճռական ակտերից մէկը։

Առաջին հարցը, որ հարկադրաբար հետաքրքրում է անցքերի ընթացքին հետևող ամեն մէկին, այն է, թէ ինչպէս պէտք է հաշուի առնէ և իր դիրքը որոշէ Ստամբուլից զրկված օսմանեան կառավարութիւնը։ Անհաւանական չէ ենթադրել, որ աւանտիւրի խայտառակ զոհը կը շտապէ «խաղաղութեան ձիթենին» մեկնել եռապետական համաձայնութեան և կատաղելապէս ըմբոստանալ իր բռնակալ պատրոնի դէմ։ Մինչև այժմ Պօլսի փաստական տէրը և տրամադրութիւնները գերողը Գերմանիան էր։ Վաղը, երբ սիտուացիայի հրամայողը տէրեր դառնան Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, աւելեան քաղաքագէտները կը շտապեն «բարի գալուստ» մաղթել «նոր հիւրերին», որ եկել են իրանց փրկելու պրուսական բռնի տիրապետութիւնից։

Բայց դրանով չէ սպառվում հարցը։ Ընդհակառակը հէնց այդտեղ է, որ վերջաբանը իր սկիզբն է առնում։

Շատ աւելի մեծ դժուարութիւնների առաջ է կանգնեցնում մեզ Պօլսի ապագայ քաղաքական ճակատագրի տնօրինման, այսինքն նրա պատկանելիութեան հարցը, քան նրա նուաճումը։ Պօլիսը մի հասարակ տերրիտօրիա չէ, որպէս զի կարելի լինի հեշտութեամբ ընծայաբերել նրան մէկին կամ միւսին և դրա փոխարէն վարձահատոյց առնել մնացածներին ուրիշ նուաճված տերրիտօրիաներով։ Պօլսի շնորհիւ, ինչպէս մենք տեսանք, պահպանվել է երկար ժամանակից ի վեր պետական մարմնի մի հիւանդ, քայքայված գոյութիւն՝ եւրօպական մրցակիցների շահերի հաւասարակշռութիւնը չը խախտելու համար։

Լեհաստանի, Գալիցիայի, Էլզաս-Լօթարինգիայի, Փոքր-Ասիայի և այլ նման պրօբլեմատիկ վիճակ ունեցող տերրիտօրիաների հարցերը անմեղ խաղեր են՝ համեմատած Պօլսի և Դարդանէլի հարցի՝ արեւելքն ու արեւմուտքը օղակող այդ հազուագիւտ բանալիի հետ։ Պօլիսը գուցէ միակ կէտն է, որի վերաբերմամբ չէ կարելի կիրառել՝ «սահմանք քաջաց զէնն իւրեանց, որքան հատանէ, այնքան ունին» սկզբունքը իր սովորական իմաստով։ Առաջին յաղթողն ու ու նուաճողը չէ, որին առանց այլեւայլութեան բաժին պիտի ընկնէ Թիւրքական մայրաքաղաքը։ Եւ ոչ հասարակ զէնքի քաղաքականութիւնը չէ, որ պիտի վախճանական լուծումը տայ Պօլսի և նեղուցի հարցին։ Պատերազմին յաջորդող դիւանագիտական քաղաքականութիւնն է միայն, որի կենտրօնական առանցքը պիտի կազմէ և իր լուծումը գտնէ Պօլսի հարցը։

Սակայն լուծել Պօլսի և Դարդանէլի հարցը՝ նշանակում է որոշել Թիւրքիայի այսուհետև ունենալիք բաղդը, ասել է՝ լուծել օսմանեան պետութեան գոյութեան հարցը Եւրօպայում։

Բայց հէնց այդ՝ դարերով անիծված հարցն է—այդ՝ հարցերի հարցը Մերձաւոր Արեւելքում—որ անհնարին է դարձնում կանխօրէն որոշելու կամ գէթ ենթադրելու իր լուծման այս կամ այն եղանակը։ Եւ սենսացիօն մամուլի մատուցած «ծառայութիւնը», որ դեռ պատերազմի սկզբից իր կաթեգօրիկ լուծումներն է տուել Պօլսի, Դարդանէլի, Եւրօպական և անգամ Ասիական Թիւրքիայի հարցերի՝ ամենավատ ու վնասակար ծառայութիւնն է քաղաքականապէս տհաս ու անգիտակ ընթերցող հասարակութեան համար։

Մարգարէութիւնը ամենից քիչ ներելի է քաղաքական հարցերի, դիւանագիտական ոլորապտոյտ մախինացիաների բնագաւառում։ Եւ հրապարակախօսը, եթէ նա բանաստեղծելու փոխարէն քննական վերլուծութիւնն է ընտրում իր կոչումը, չը պէտք է սենսացիօն յղացումներով կանխէ դէպքերին և տակաւին անյայտ կաբինետային որոշումներին։

Ի՞նչպէս ենք նայում մենք հարցին։

B. Lucifer

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետր.—1 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը այսօր բարեհաճեց մեկնել Ցարսկոէ Սէլօյից գործող զօրաբանակը։

Թագաւոր Կայսրին ուղեկցում են ֆլագ-կապիտան Նիլօվ, պալատապետ Վօէյկօվ, հօֆմարշալ Դօլգօրուկօվ, իշխան Օրլօվ, Նորին Մեծութեան պահակախմբի պետ կոմս Գրաբբէ, ֆլիգել-ադիւտանտներ Դրենտէլն, Սվէչին և Սաբլին և պալատական վիրաբոյժ Ֆեդօրօվ։

Ստորագրեց Կայսերական Պալատի մինիստր գեներալ-ադիւտանտ կոմս Ֆրեդէրիկս։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճեց այսօր ժամանել գործող զօրաբանակը։

Ստորագրեց Կայսերական Պալատի մինիստր գեներալ-ադիւտանտ կոմս Ֆրեդէրիկս։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրի անունով ստացվել է հետեւեալ հեռագիրը Լօնդօնի ռուսական ընկերութեան պատուաւոր քարտուղար Ջէմս Մալկօլմից։

Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին։ Ձերդ Մեծութիւն, նկատի առնելով անգլօ-ռուսական բարեկամութեան մեծ ապագան ոչ միայն պատերազմական ժամանակ, այլ և հաշտութեան երկարատև շրջանում, Լօնդօնում կազմակերպվեց բրիտանական լայն խաւերի արտայայտիչ ընկերութիւն, որի նպատակն է նպաստել այդ բարեկամութեանը և օգնել Մեծ-Բրիտանիայի ազգաբնակութեան բոլոր դասակարգերին ճանաչելու և հասկանալու ռուսական կեանքը, գեղարուեստն ու կառավարութիւնը։

Այդ ընկերութեան հիմնադիր ժողովը կայացաւ 1915 թ. մարտի 10-ին պարլամենտի շինութեան մէջ, նախագահի բնակարանում։

Ընկերութիւնը խնդրում է արտայայտել Ձերդ Մեծութեանը խորագոյն յարգանքի սրտագին բարեմաղթութիւնների ու անձնական անկեղծ հիացմունքի զգացմունքներ։ Ամբողջ ժողովուրդը և մանաւանդ այս ընկերութիւնը գիտակցում են, որ Ռուսաստանը ներկայումս հանդիսանում է անհամեմատ մեծ, քան նա երբէք եղել է անցեալում։ Մենք խորապէս շնորհակալ ենք Ռուսաստանի բարեկամութեան համար ներկայ մեծ ազգային կռւում։ Մենք գիտակցում ենք ոչ միայն նրա նիւթական օգնութիւնը, այլ և Ռուսիայի աղօթքների ազդեցութիւնը։ Մենք հիացած ենք Ռուսաստանի մեծահոգութիւնից առ Սերբիան և Լեհաստանը և դէպի այն բարոյական ոյժը, որպիսին երևան եկաւ ոգելից ըմպելիքների վաճառքի՝ Ձեր Մեծութեան խելացի արգելքի՝ մէջ։ Մենք մեր հայեացքները ուղղել ենք դէպի Ձեր մեծ ու հրաշալի ժողովրդի բարգաւաճումը և վստահեցնում ենք Ձեզ, որ մեր բարեկամութիւնն ու համակրանքը անխախտ է։

Թագաւոր Կայսրը բարեհաճեց ջերմ շնորհակալութիւն յայտնել Լօնդօնի ռուսաց դեսպանի միջոցով։

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետ. և 1 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Փետրվարի 27-ին ամբողջ ռազմաճակատում խոշոր ռազմական ընդհարումներ չեղան։

Նեմանի ձախ ափում և Գրօդնօյի ճանապարհների վրա կռիւներն ունէին մասնաւոր բնոյթ։

Սիմնօյի հիւսիսում մենք սրի քաշեցինք գերմանական մի փոքր զօրամաս, բռնելով գերիներ և վերցնելով երկու թնդանօթ։

Կօպցիէվօյի շրջանի լճերի մօտ թշնամու երկու գունդ անակնկալ ընկան մեր թնդանօթային կրակի տակ և խոշոր կորուստներ կրեցին։ Քշելով հակառակորդին դէպի Աւգուստօվօյի մօտի անտառամասերը, մեր զօրքերը կենտրօնացան Լիպսկի շրջանում։

Բօբրի և Նարեվի աջ ափերում փոփոխութիւն չը կայ։

Օսօվէցի թնդանօթները շարունակեցին աջողակ գործել պաշարիչ թնդանօթաձիգ վաշտերի դէմ։ Օրժիցա գետի մօտ գերմանացիք փետրվարի 27-ին փորձեցին յարձակման դիմել, բայց ոչինչ չը շահեցին, նոյն իսկ ստիպված եղան մի քանի գիւղ թողնել մեզ։

Պրասնիշի հիւսիսում գերմանացիք մօտեցան 1500 քայլով մեր խրամատներին, բայց նրանց չաջողվեց ամրանալ այստեղ։ Մեր կրակի տակ գերմանացիք ետ քաշվեցին։ Նրանց թողած խրամատներում մենք գտանք շատ հրացան և ռազմական իրեր։

Կարպատներում և Արեւելեան Գալիցիայում ձիւնախառն ուժեղ մրրիկ է. բայց և այնպէս Սմօլնիկի շրջանում մենք հարկադրեցինք աւստրիացիներին ետ քաշվել մեր դիրքերի մօտից։ Թշնամին նորից յարձակում գործեց մեզ վրա Կօզիւվկայի շրջանում, բայց ապարդիւն։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Նեմանի և Վիսլայի միջև կռիւները տեղի են ունենում միայն Օմուլէվի և Օրժիցայի հովիտներում և Պրասնիշի ուղղութեամբ, ընդհանուր առմամբ մօտ 50 վերստ երկարութեամբ։ Հակառակորդը փորձեց առաջանալ, բայց ամենուրեք ետ մղվեց, և մեր զօրքերը, փետրվարի 28-ին դիմելով հակայարձակման, տիրացան մի քանի գիւղերի։

Բօբրի և Նարեվի աջ ափի մնացած շրջաններում և Վիսլայի ձախ ափում միայն թնդանօթաձգութիւն էր։

Կարպատներում ուժեղ մրրիկ է։

Լուպկօվի շրջանում մենք առաջացանք և բռնեցինք աւելի քան 600 գերի՝ 14 օֆիցէրի ու 6 գնդակացիրի հետ։

Րաբբէ-Ռադզէյիւվ-Ստուդէնէ զօրաճակատում աւստրիացիք շարունակում են փորձեր անել ճեղքելու մեր զօրագիծը, բայց ծանր կորուստներ են ունենում։

Կօզիւվկա և Ռօժանկա շրջանում գերմանացիք նորից անընդհատ խիզախ յարձակումներ գործեցին մեր դիրքերի վրա. այդ յարձակումները վանվեցին թշնամու համար խոշոր կորուստներով։ Հակայարձակման ժամանակ մենք բռնեցինք մի քանի հարիւր գերի։

Արեւելեան Գալիցիայում մենք դիւրութեամբ վանեցինք թշնամու կրկնակի յարձակումները։ Նէզվիսկա գիւղի մօտ աւստրիական մի գումարտակ ամբողջովին ցրուցան եղաւ։

Պերէմիշլի մօտ մենք անակնկալ յարձակումով ձեռք ձգեցինք դիրքեր Մալկօվիցէ գիւղի մօտ։ Այդ դիրքերը գրաւած աւստրիական գումարտակը գերի ընկաւ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետրվարի

ՓԱՐԻԶ.— Թշնամու խրամատներից 30 մետր հեռաւորութեան վրա զօրապետներ գեներալներ Մօնուրին և Վիլլարէն դիտում էին մեր խրամատները, երբ թշնամու գնդակներից նրանք վիրաւորվեցին։

ԼՕՆԴՕՆ.— Ֆելդմարշալ Ֆրէնչի հաղորդագրութիւնը. «7-րդ դիվիզիան այսօր առաջացաւ Օբէրի ուղղութեամբ։ Կռիւը շատ յամառ էր, որովհետև թշնամին ստացաւ օգնութիւն մեծ չափով։ Անգլիացի զօրքերը գերեցին 615 հոգու։ Բերում են նորերին։ Զինուորական օդագնացները եռանդով գործում են։ Այսօր նրանք խզեցին Դուլօնի և Դուէի կապը»։

ՓԱՐԻԶ.— Պուանկարէն այցելեց գեներալ Մօնուրին և յանձնեց նրան, համաձայն Ժօֆֆրի և Միլլէրանի առաջադրութեան, պատերազմական շքադրամ։ Գեներալ Մօնուրին վիրաւորված է ձախ աչքից և գանգից։ Մօնուրիի բարոյական ու ֆիզիքական դրութիւնը շատ լաւ է. բժիշկները երկիւղ չեն յայտնում բարդութիւններից։ Գեներալ Վիլլարէն վիրաւորված է ճակատից. բժիշկները աջող կերպով սղոցեցին ճակատի մի մասը և երկիւղ չեն արտայայտում։

ՓԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւնը յայտնում է, որ անգլիացիք շարունակում են առաջանալ Օբէրի ուղղութեամբ, գերելով մի օրվայ մէջ 1000 գերի ու վերցնելով մի քանի գնդացիր։ Ֆրանսիացիք օժանդակում են անգլիացիների գործողութիւններին և վանում թշնամու յախուռն յարձակումները։

Իզէրի մօտ բէլգիացի զօրքերն առաջանում են։

Գերմանացիք ռմբակոծեցին Րէյմսը։

Լօթարինգիայում ֆրանսիացիք գրաւել են Էմբերմէնիլը։ Վօգեզներում թնդանօթային կռիւ է։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետր. և 1 մարտի

ՊԵՐՆԱՄԲՈՒԿՕ.—«Գիվադէլիւպ» շոգենաւը ջրասուզվել է «Կրօնպրինց Վիլհէլմ» յածանաւից։ Նաւաստիները և ճանապարհորդներն ազատվել են։

ԼՕՆԴՕՆ.— Ծովակալութիւնը հաղորդում է, որ գերմանական ականից փետր. 26-ին ջրասուզվել է «Բայանօ» յածանաւը, որի նաւաստիները խեղդվել են, ազատվել են միայն 8 օֆիցէր և 18 նաւաստի։

ՀՈՒԼԼ.—Շվէդական «Գաննա» շոգենաւը Սկարբօրօյից երէկ դուրս գալու ժամանակ ենթարկվեց ստորջրեայ ռազմանաւի յարձակման և ջրասուզվեց. խեղդվեցին 6 մարդ։

ԼՕՆԴՕՆ.—Ծովակալութիւնը հաղորդում է, որ բրիտանական 7 շոգենաւ նորից ենթարկվեցին գերմանական ստորջրեայ նաւերի յարձակման։ Այդ շոգենաւերից 2-ը ջրասուզվել են։ Խեղդվել են 3 մարդ։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

27 փետրվ.—1 մարտի

ՀՌՕՄ.—Մամուլը և հասարակական կարծիքը չափազանց գրգռված են գերմանացիների մի նոր, պատահմամբ երևան հանված դժոխային մտքումից։ Վենետիկի նաւահանգիստը հասան երկու վագոն, բեռնված գարեջրի 92 տակառով, որ ուղարկվում էին Բերլինից իտալական Տրիպօլիսի նահանգներ։ Կասկածելով՝ տակառներից մինը բացին, և նրանում գտնվեց թիթեղեայ գլան (ցիլինդր) տակառի ամբողջ երկարութեամբ։ Գլանի մէջ կային 1892 թ. տեսակի ֆրանսիական հրացաններ, որոնց կից կային նաև փամփուշտներ։ Ենթադրում են, որ բոլոր տակառների մէջ կան ոչ պակաս 500 հրացաններ։ Տակառները գրաւվեցին։ Գերմանացիք նպատակ ունէին ոչ միայն զէնք հայթայթել Տրիպօլիսի ապստամբներին, այլ և երկպառակութիւն սերմանել Իտալիայի և Ֆրանսիայի միջև, ձգելով պատասխանատուութիւնը վերջինիս վրա։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—Ամերիկեան մամուլը գերմանական «Պրինց-Էյտէլ-Ֆրիդրիխ» յածանաւի գործողութիւնների մէջ տեսնում է ոտնձգութիւն ամերիկեան քաղաքացիների իրաւունքների դէմ։ Ամերիկեան ազգի մի մասը պահանջում է ոչ միայն ներողութիւն պահանջել, այլ և բաւարարութիւն գերմանական կառավարութիւնից։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Համառուսական զեմստվային միութեանը յատկացվեց մինիստրների խորհրդից 700,000 ռուբլի՝ ընդլայնելու բժշկական հաստատութիւնները կովկասեան զօրքի կարիքների համար։

ԲՈՒԽԱՐԷՍՏ. — Ֆինանսների մինիստր Կոստինեսկուն հրաժարական տուեց։ Պաշտօնական օրգանը բացատրում է այդ՝ թիւրիմացութեամբ։

ՍԱԼՕՆԻԿ.—Գեն.-նահանգապետ Մակուլիսը մեկնեց Աթէնք, ինչպէս ենթադրվում է՝ մասնակցելու Վենիզէլօսի կուսակցութեան համագումարին։

ՄՕՍԿՎԱ.—Քաղաքը 150,000 ռ. յատկացրեց զինուորների զատկական ընծաների համար։

ՍԱԼՕՆԻԿ.—Հերքվում են այն յամառ լուրերը, թէ իբր յունաց կառավարութիւնը Լէմնօսից ետ է կանչել իր պաշտօնեաներին անգլօ-ֆրանսիական զօրք ափ իջեցնելու պատճառով։

ՓԱՐԻԶ.—Յունաց դեսպանը այցելեց Դէլկասէին և պաշտօնապէս հաւաստիացրեց, որ Աթէնքի մինիստրութեան փոփոխութիւնը ոչ մի փոփոխութիւն չի մտցնի Յունաստանի արտաքին քաղաքականութեան մէջ։ Գունարիսի կաբինէտը շարունակելու է Վենիզէլօսի կաբինէտի քաղաքականութիւնը, ղեկավարելով Յունաստանի տրադիցիօն զգացմունքներով երրեակ համաձայնութեան պետութիւնների վերաբերութեամբ։

ՀՌՕՄ.—Վենետիկի մաքսային բիւրօյում իշխանութիւնների ներկայութեամբ բացվեցին «գարեջրի» բոլոր 92 տակառները, որոնք ուղարկվում էին Գերմանիայից Լիբիան. նրանց մէջ գտնվեցին 546 հրացան ու 273,000 փամփուշտ։

Տեղեկութիւններ են ստացվել, որ Քաթանիայում և Նէապօլում բռնվել են ուրիշ տակառներ «գարեջրով», որոնց մէջ նոյնպէս հրացաններ են։

ՍՕՖԻԱ.—Բուլգարական գործակալութիւնը հաղորդում է, որ յունաց մամուլում երեւցած տեղեկութիւնները, թէ իբր Սօֆիայում կայացել է գերագոյն խորհուրդ, որին Ռադօսլավօվը առաջարկել է յարվել երրեակ համաձայնութեանը և հանդէս գալ ընդդ Թիւրքիայի, ըստ որում կուսակցութիւնն րի պարագլուխները միացել են Ռադօսլ վօվի կարծիքին, իսկ Թագաւորը խօսել Յունաստանի վրա յարձակում գործելու տին, որից յետոյ Ռադօսլավօվը իբր հրաժարվել է իր պաշտօնից, յերիւր են։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Չը նայած, որ Բրատի նուն ջանում է համոզել ֆինանսների մ նիստր Կոստինէսկուին մնալ իր պաշտօնո վերջինս պնդում է հրաժարականի վր Դրութիւնը բարդացաւ։ Խօսում են մի ք նի ուրիշ մինիստրների հրաժարականի նրանց՝ Բրատիանուի բարեկամներով փոխ րինելու մասին։

Այսօր Թագաւորը այցելեց Բրատիանու և երկար խօսակցութիւն ունեցաւ նրա հե

Մարգիլօմանը, Կարպը և Մայօրէսկ ագիտացիա են մղում նոր գերագոյն խո հուրդ գումարելու օգտին։ Նրանց ջանքե առաջ են բերում անհանգստութիւն նաց նալիստների մէջ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑՈՒՐՋԸ

◆ «Ր. Ս.»-ն յայտնում է, որ Բրուսս վալին յայտնել է Բ. Դրան, որ Բրուսս ֆրանսիական դպրոցում գտնվել է 19 պաց ուժանակ և ռումբեր։ Ջէզօք պետ թիւնների հիւպատոսները այդ լուրը հ մարում են պրօվակացիա։

◆ «Ս. Ր.»-ն յայտնում է, որ Փոքր-Ասի յում սարսափելի յուզմունք է տիրում։ Ի խանութիւնները հեռացել են, պաշտօն տները մնացել են դատարկ, որոնց մէջ պաստանել են քրիստոնեաները։ Հայու մարդիկ մեկնում են երկրի խորքը։

◆ Մայրաքաղաքի թերթերը յայտն են, որ Ռադօսլավօվի հրաժարականը դունվել է։ Պրէմիէր է նշանակվել Գենն դիէվը։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԿՈՄՍ ՎԻՏՏԷԻ ՄԱՀԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետրվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Լոյս փետրվարի 28-ի գիշերը վախճանվեց ստատս-սեկրետար կոմս Վիտտէն։

Այսօր ժամը 2-ին կատարվեց առաջին հոգեհանգիստը, որին ներկայ էին մինիստրների խորհրդի նախագահը, Պետական Խորհրդի փոխ-նախագահը, ֆինանսների մինիստրը՝ երկրագործութեան ու հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչը, պետական վերահսկիչը, ժողովրդական լուսաւորութեան և առևտրի ու արդիւնաբերութեան մինիստրութիւնների կառավարիչները, նաև Պետական Խորհրդի անդամներ և ուրիշ շատ անձինք։

ՄՕՍԿՎԱ.—Ակցիզային վարչութեան մէջ կատարվեց հոգեհանգիստ կոմս Վիտտէի համար։ Առևտրական կրթութիւն տարածող ընկերութիւնը կոմսի այրուն ուղարկեց ցաւակցական հեռագիր։ Մօսկվայի առևտրական ինստիտուտը պսակ ուղարկեց դագաղի վրա դնելու։

ՍՏՕԿՀՕԼՄ. — Երեկոյեան լրագիրներում տպված է կոմս Վիտտէի պատկերը և նրա գործունէութեան մանրամասն խարակտէրիստիկան՝ իբրև պետական անձի։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ.— Երեկոյեան լրագիրները տպել են կոմս Վիտտէի մահվան շուրջը մանրամասն նեկրօլօգներ, բնորոշելով նրան իբրև շնորհալի ու փառասէր պետական գործիչ, բայց ոչ զուրկ պակասութիւններից։

ՓԱՐԻԶ.—Լրագիրները երկար նեկրօլօգներ են նուիրել կոմս Վիտտէին։

«Տանը» կրկնում է Ֆրանսիայում տարածված կարծիքը հանգուցեալի գերմանասիրական զգացմունքների մասին։

«Ժուրնալ-դը-Դէբան» անուանում է Վիտտէին անկեղծ հայրենասէր, որ մեծ ծառայութիւններ մատուցեց Ռուսաստանին, բայց տուժեց անբարեացակամութեան և նրա շուրջ ստեղծված առասպելների պատճառով։

ՉԻՆ-ԵԱՊՕՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետրվարի

ՏՕԿԻՕ.—Լուրերի համաձայն, փետրվարի 26-ին Պէկինում չինական արտաքին գործերի մինիստրը հարցապնդել է եապօնական դեսպանին, թէ մտադիր է, արդեօք, Եապօնիան ներկայումս կատարվող բանակցութիւններին զուգընթաց զինուորական ոյժ գործադրել։ Եապօնական դեսպանը պատասխանել է, որ Եապօնիան այժմ, ինչպէս ամէն տարի, սոսկ տեղափոխում է մի տեղից միւսը Մանջուրիայում գտնվող իր զօրքերը։ Սակայն, եթէ Եապօնիան համոզվի, որ Չինաստանը անկեղծօրէն չէ ցանկանում կատարել եապօնական պահանջները, որոնք հետամուտ են ապահովելու խաղաղութիւնը Հեռաւոր Արևելքում, Եապօնիան ստիպված կը լինի դիմել վճռական միջոցների, որոնք կարող են աննպաստ ազդեցութիւն ունենալ ոչ միայն Ցինդաօյի և Մանջուրիայի, այլ և ամբողջ Չինաստա դրութեան վրա, և այն ժամանակ պատա խանատուութիւնն ամբողջովին ընկնում չինական կառավարութեան վրա։

Լուրերի համաձայն, Օկումի կաբինէ վճռել է լուծել չինական հարցը մի պարլամենտի ընտրութիւնները, որո նշանակված են մարտի 25-ին։

Ոգևորված կառավարութեան միջոցներ «Ջիջի Շիմպօնը» գրում է. «Եթէ Չ նաստանը շարունակէ ձգձգման քաղաք կանութիւնը, այն ժամանակ Եապօնիա հասարակական կարծիքը կը պահանջէ վճ ռական գործողութիւններ։ Չինաստանի կախված լուծել ստեղծված դրութիւնը խ ղաղ ճանապարհով, համաձայնելով Եապ նիայի պահանջներին, կամ առաջ բեր լուրջ բարդութիւններ բանակցութիւննե դադարեալ ձգձգելու դէպքում»։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետրվարի

ՀՌՕՄ.—Պարլամենտում սկսվեցին վիճ բանութիւններ պետութեան տնտեսական զինուորական ինքնապաշտպանութեան օ նագծի առիթով։

Քաղաքական շրջաններում մեղմացաւ անհանգստութիւնը, որ առաջ է եկել գ մանական գործակալների տարածած սու յօդ լուրերից Սալանդրայի և իշխան Բիւլօ բանակցութիւնների մասին։

«Մէսաժէրօն» պնդում է, որ Բիւլօ յայտնել է, թէ Աւստրիան կարող է տէրր տօրիալ զիջումներ անել Իտալիային մի այն պայմանով, եթէ Իտալիան պարտաւո պաշտպանել գերմանական առաջարկ թիւնները ապագայ հաշտութեան կօնգր սում։ «Դրանից յետոյ,—գրում է լրագի րը,—մեր կառավարութեան գործը մ գամից թեթևացաւ»։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետրվարի

ԿԻԵՎ. — Հարաւ-Արևմտեան երկր սկսված ձիւնախառն մրրիկը երկու օր եւելով այսօր թուլացաւ և տեղ-տեղ դ րեց։ Շատ գիւղեր կտրված են միմեանցի Խրճիթների տանիքները պոկված են, տառներում և այգիներում ծառերը տ հան են եղել. տեղ-տեղ խզվել է հեռագ կան և հեռախօսի հաղորդակցութիւն Գնացքների երթևեկութիւնը անկանոն է։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.—Նորից ծովային սաստ ակծութիւն է։ Ձիւնախառն մրրիկն խանգարել են գնացքների կանոնաւոր թևեկութիւնը։

ՎԱՍԻԼԿՕՎ.—Երդուեալ ատենակալն յանցաւոր ճանաչեցին Գօնչարօվին հի խային սպանելու մէջ և դատապարտեց նրան 12 տարով տաժանակիր աշխատա ների։

ԼԱՑԼԱՆԻ (Քութայիսի նահ.)—Տեղի նեցաւ իշխան Գելօվանիի թաղումը բենի Օրբէլի գիւղում՝ Սվանեթիայի մանում։

Դագաղին ուղեկցում էին վրաց հասարակական կազմակերպութիւնների և մամուլի ներկայացուցիչները։

Սգերթին մասնակցում էին գաւառների մի քանի հարիւր ձիաւոր ներկայացուցիչներ։

Ճանապարհին դագաղին հանդիպում էին շինական իշխանութիւններ, հոգևորականութիւնը, ազգաբնակութեան ներկայացուցիչները և գիւղացիական պատգամաւորներ։

ԹԷՀՐԱՆ.—Մուստաֆա-ուլ-Մէմալէքի կաբինէտը հրաժարական տուեց։

ՄԱՏԱԿԱՐԱՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԿՈՎԿԱՍԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

28 փետրվարի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մատակարարական գործի խորհրդակցութիւնը, քննելով պատերազմական գործողութիւններից վնասված կովկասեան ազգաբնակութեանը սերմացու ու ալիւրի օգնութիւն ցոյց տալու հարցը, որոշեց առաջարկութիւն ներկայացնել մինիստրների խորհրդին՝ տարածելու Կովկասի այն վայրերի վրա, որոնք վնասվել են պատերազմական գործողութիւններից, մինիստրների խորհրդի Բարձրագոյնս հաստատված օրագրերում պարունակվող և արևմտեան ռազմաբեմի ազգաբնակութեանը օգնելու կազմակերպութեանը վերաբերող որոշումները, նաև յատկացնելու ներքին գործերի մինիստրին առաջիկայ ծախքերի համար 3 միլիոն ռուբլի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱԿ

Գորչակովօ կայարանի (Անդրկասպ. երկ.) հայ նուիրատուների

(Օգնութ հայ փախստականների)

(Տես «Մշակ» № 20)

Թ. Դաւթեան 20 ր., Գ. Աւագեան 15 ր., Հ. Աթաբէկեան 11 ր., Տ. Աւագեան 6 ր., Ար. Թառումեան, Ան. Կ. Ընկ. գրասենեակ 5-ական ր., Նիկ. Գրիգորեան 4 ր. 50 կ., Ս. Բաբայեան 4 ր., Խ. Միրզոյեան 3 ր. 50 կ., Նիկ. Միրզոյեան, Աղ. Բալասանեան և Գր. Առաքելեան 3-ական ր., Կ. Աւագեան 2 ր. 50 կ., Նիկ. Սարգսեան, Տ. Միրզոյեան, Ս. Յարութիւնեան, Կ. Հայրապետեան, Ն. Գրիգորեան և Ար. Սիմէօնեան 2-ական ր., Ст. Чевренили, Նիկ. Թումեան և Արտ. Պետրոսեան 1 ր. 50-ական կ., Գ. Գաբրիէլեան Լ. Դանդուրով, Նիկ. Արթումեան, Գր. Աբէլեան, Պ. Ամալեան, Աս. Գալստեան, Ար. Առաքելեան, Թ. Գալստեան, Թ. Սարգսեան, Մատթէոս և Կոլա Միրզայեան 1-ական ր., Յովհ. Թադէոսեան 50 կ.։ Գումարը 114 ր. 50 կ.։

ԿՈՄՍ ՎԻՏՏԷ

Ներկայ ընդհանուր խառնակ ժամանակ գերեզման է իջնում ռուսական մի խոշոր դէմք, պետական ականաւոր գործիչ կոմս Ս. Իւ. Վիտտէն։

Հանգուցեալը, Ստոլիպինի նման, ստորին պաշտօնից շատ շուտով հասաւ պետական բարձր պաշտօնների, մինչև մինիստրների խորհրդի նախագահի պաշտօնին։ Եւ այդ անշուշտ պէտք է վերագրել նրա անհատական ընդունակութիւններին ու ձիրքերին։

Վիտտէի պետական գործունէութիւնը ամենից առաջ կիրառվում է ֆինանսական շրջանում, ուր նա ֆինանսների մինիստրի պաշտօնի մէջ կարող եղաւ խոշոր դեր խաղալ։ Նրա օրով՝ պետական գանձարանի միջոցները նկատելի չափերով սկսեցին աճել շնորհիւ օղու արքունի մոնոպոլիայի։ Վիտտէի օրօք Ռուսաստանում արբեցողութիւնը հասաւ ծայրայեղ չափերի, միայն թէ արքունի գինեվաճառութեան հասոյթներից պետական գանձատան միջոցները շատանային։ Երբ Պետ. Դումայում քննադատվեց արբեցողութեան զարգանալը, Վիտտէին յաջորդած ֆինանսների մինիստր Կոկովցեվը հեգնական պարծենկոտութեամբ յիշեցրեց, որ իր ուսուցչի ջանքերի շնորհիւ, որի քաղաքականութեան շարունակողը եղաւ և ինքը, արքունի գինեվաճառութիւնից պետական գանձատունը շահել է 500 միլ. ր.։

Բայց Վիտտէի գործունէութեան կնիքը, բացի ֆինանսական շրջանից, իր ուժեղ թափով ընկաւ նաև հասարակական-պետական այլ բազմաթիւ արտայայտութիւնների վրա։ Չունենալով կայուն քաղաքականութիւն, նա իր հեղինակութեամբ և գործունէութեամբ ազդեցութիւն է ունեցել ռուսական կեանքի զանազան արտայայտութիւնների վրա։ Եւ դրանով է բացատրվում ի միջի այլոց այն, որ անսասան միապետական սկզբունքի տէր Վիտտէն հանդիսացաւ յանկարծ ռուսական սահմանադրութեան հեղինակ, հոկտ. 17-ի մանիֆեստի խմբագրողը։

Մի կողմից Վիտտէն աջակցեց սահմանադրական սկզբունքները կեանքի մէջ մտցնելուն, միւս կողմից նա, ներքին գործերի այն ժամանակվայ մինիստր Դուրնովոյի հետ, պատժիչ արշաւախմբեր էր ուղարկում զանազան վայրեր...

Կոմս Վիտտէն պետական գործունէութեան ասպարէզից հեռացաւ յեղափոխութեան տարիներում, երբ նա մեկնեց արտասահման, ուր և գրի առաւ այդ ժամանակի իր ստացած տպաւորութիւնները առանձին յիշատակարանի մէջ, որ ներկայումս պահվում է հանգուցեալի աղջկայ մօտ արտասահմանում։ Անշուշտ ապագայ պատմաբանի համար այդ յիշատակարանը ներկայանում է շատ թանգարժէք նիւթ։

Կոկովցեվի պրեմիէրութիւնից հեռանալը տեղիք տուեց Պետրօգրադի ղեկավար շրջաններին յիշել Վիտտէին, որ վերջերս վերադարձաւ Ռուսաստան, և, թէև գլուխ չէր կանգնած պատասխանատու պաշտօնում, բայց հեռուից մասնակցում էր պետական գործերին, վայելելով իր նախկին մեծ հեղինակութիւնը։

Եւ անկասկած է, որ պատերազմական այսպիսի տագնապալի օրերում, երբ Վիտտէն իբրև պետական փորձառու գործիչ կարևոր դեր էր խաղում, որին նոյն իսկ մտադրվում էր յանձնել Գերմանիայի հետ հաշտութիւն կնքելու դէպքում բանակցութիւններ վարելու լուրջ պարտականութիւնը, նրա մահը զգալի հարուած է ռուսական դիւանագիտութեան և շատ զգալի։

ԻՆՉՊԷՍ ՎԱՐՈՒԵԼՈՒ ԵՆՔ ԱՅՍՏԵՂ

(Թիւրքահայ գաղթական եղբայրներիս)

Եկանք վերջապէս, հասանք Ռուսաստան։

Նորէն քանդուեցաւ մեր տունն ու տեղը։ Բաղդին կատակը անգամ մըն ալ հալածեց մեզ պատմական չորս գետերու ակերէն և շպրտեց մեծ լեռան այս կողմը։

Այլևս ապագայ անաչառ, ճարտար պատմագրին թողունք մեր վշտերուն իսկական պատկերացումը, ուր՝ դիտող մարդկութիւնը քստմնած՝ և հայը իր հոգւոյն խորքերէն յուզուած պիտի կարդան՝ նմանը չարձանագրուած թիւրքին դաժանութիւնները, զոր այս տարի կը կրէ ահա ամբողջ թիւրքահայութիւնը։

Որչափ կուզեն՝ անամօթօրէն թող շառլաթանեն Ռուսաստան վերջերս գերի եկող խարբերդցի Թայիր-բէյերը, թէ «երկրի (Թիւրքիայի) խորքում հայերը հանգիստ են...» և այլն (տես «Մշակ» թիւ 9, Ատրպետ)։

Իրողութիւնը արար աշխարհի և մեզի ծանօթ է փաստացիօրէն թէ «սէֆէրբէրլիք» և «ջհատ» անուն գեհենային կրակին մէջ կը խանձուէին այս պահուն Թիւրքիայի մեր բոլոր եղբայրները։ Զանոնք և մեզի հետ եղողները քիւրդական կատաղի ջլավին մէջ թողուցինք, հետերնիս բերած մեր սիրելիներէն շատերը՝ Արարատեան դեկտեմբերի բուք ու բորանին յանձնեցինք, քանի որ Նպատ լեռնէն թնդանօթներն ալ կը գոռային, ու առապարները սառած էին։

Մենք անցանք գիշերները՝ երախաներու և անկարներու հոնդիւնը Արածանիի սառոյցներուն տակէն լսելով...։

Սահմռկած, դիերը կոխոտելով անցանք Թաւալգլոր Նպատի ու Մասիսի առջևէն այս անգամ ալ... և ահա եկանք շարան-շարան, գզգզուած ու սոված լեցուեցանք հոս՝ Ռուսաստան՝ մեր սիրելի եղբայրներուն կոկիկ տուները։

Կաթողիկոսարանն ու պետական անձնաւորութիւններ, ժողովուրդն ու նպաստից յանձնաժողովներ՝ անուրանալի է որ այս պահուս գաղթականներուս կարիքը դարմանելու զբաղած են աւելի։

Խնարհ կարծեօք՝ ամէն կողմ արդէն գրկաբաց կընդունին մեզ՝ թշուառներս ու մենք անհուն երախտապարտ ենք այդ ազնիւ հոգացողութեանց հանդէպ։

Տարակոյս չունենանք, թէ տակաւ մեր մէջ անպատսպար մէկը պիտի չմնայ, և ամենէն ուշ գոհ մնացողն ալ՝ վեհ տպաւորութիւններով առլցուն պիտի վերաբերի դէպի մեր բարերարները։

Իրաւ որ կարիքնիս շատ է. քանի որ անհուած և յանկարծ գաղթեցինք. քանի որ ունեցածնիս ալ ճանբաները ցրցնելով փախանք և ահա անոր համար աչքերնիս մնացած է կաթողիկոսարանին դուռն ու թերթերու նպաստի սիւնակները, «որ դեռ չբաժնուեցաւ մեզ» կըսենք շատերս նպաստի մասին։ Բայց խորհինք նաև, որ մենք ալ քչւոր չենք։ Ամեն կողմ կը հետևինք մեր կարմիր խայտաբղէտ քուրքերով ու խեղճուկութիւններով։

Բոլոր այս անհաւլի կարօտութիւնները՝ իրենց բարոյական ու նիւթական կողմերովը ունին անշուշտ՝ ազգային, քանդիչ և սպանիչ հանգամանքներ, որոնց դարմանումը իրապէս՝ վսեմ ու մեծահոգի ձեռքերու կը կարօտի։

Մենք կարօտ ենք այժմ և պիտի օգնեն մեզի՝ պատուական եղբայրներս։

Ահա այս է մեր ընդհանուր կացութիւնը։

Սակայն մենք ալ՝ այդ օգնութեանց հանդէպ միայն լալկան սպասողներ պիտի չըլլանք անշուշտ, որով մի գուցէ խորշեցնենք մեզի օգնութիւն կարկառող ձեռքերը։

Նկատի ունենանք, թէ ինքնայուսահատութիւնը ամենէն գէշ մոլութիւնն է իսկապէս, զոր հեռացնելու ենք խսպառ մեզմէ։ Զէ մի որ պահ մը առաջ մենք չքաւորներ չէինք։ Ո՞վ կուրանայ, թէ մեր լալկան և ճղակոտր կարաւանը կազմուած է քահանաներէ, ուսուցիչներէ, առևտրականներէ, գրչանհատուած արհեստաւորներէ, կառավ. պաշտօնեաներէ, ճոխ գիւղական նահապետներէ և այլն։ Թէև այս ամենս այժմ քրձազգեաց պատսպարան կը փնտռենք։ Շնորհիւ թիւրք բարբարոսութեան՝ մենք քանի մը տարին անգամ մը այս ջլատուած վիճակին հասած՝ ու նորէն եղբայրական օժանդակութեանց միացնելով մեր անընկճելի կորովը՝ վերստին տուն տեղ կանգնեցուցած ենք....։

Ո՜հ ուրեմն այս անգամ ալ, յարգելի եղբայրներս, երբ մէկ կողմէն ռուսահայ մեր եղբայրութիւնը բարեկամ կառավարութեան հետ յօժարապէս մեզի նեցուկ ըլլալ կը ջանայ, միւս կողմէն մեզի կը մնայ թշուառութեան ծանրացած թախիծէն զարթիլ. զգալ թէ իրօք կորսուած ենք ամեն ինչ, սակայն կորսուած չենք՝ մի թանկագին, անկողոպտելի ժառանգութիւն, այն է՝ ճնշուած դարաւոր ազգի մը տոկուն կամքը։ Այդ կամքին խտացումով կարելի է անշուշտ՝ մեր օջախը վերականգնել։

«Մենք ինչ կրնանք ընել այս վիճակաւ...» ըսելով, չընկճինք մնանք տեղերնիս։

— Նախ, որ մենք գործելու կրնանք միտել ամենուրեք. և մեզի ողորմութիւն երկարող ազնիւ ձեռքէն՝ ամենէն առաջ գործ կրնանք խնդրել։ Մենք կրնանք միշտ լքուած օջախնուս և արտերնուս վերաշինման նուիրական իղձովը տոգորուիլ, որպէսզի պատեհութիւնը ներկայանալուն պէս՝ հոն հասնինք և գործի սկսինք։ Մենք կրնանք դիտող ըլլալ։ Այստեղի քաղաքակրթական եղած պայմաններէն որքան կարելի է օգտուիլ՝ և ապագային աւելի չափով մը իրարու օգտակար ըլլալ։ Վերջապէս մենք կրնանք՝ մեր մեծ ու պզտիկ երկսեռ զաւակները փողոցները չթողուլ, որոնց օրական ինքնագլուխ բերած ողորմութիւնը՝ շահ չհամարենք մեզի։

Թշուառութիւնը ասպետական ոգւով տանինք։

Օգնենք մենք մեզի՝ որքան կարելի է, եղբայրներս, որ չյուսահատին մեզի օգնողները։ Գաղթական

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՒՂԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԸ

IV

Յաճախ է պատահում, որ երկու գիւղացի այս կամ այն ռազմական ճակատի, այս կամ այն քաղաքական տերմինի, այս կամ այն աշխարհագրական տեղի մասին վիճաբանութեան բռնվելիս, մէկը միւսին հասկացնելու, համոզելու և աւելի շուտ «կտրելու» համար դիմեն տեղեակ մարդու, քարտէզի կամ գլոբուսի օգնութեան։

Վաղ առաւօտեան գիւղական դպրոցի դարպասն արագ-արագ թակում են։ Ծառան վազում է դուրս։ Լսում եմ դրսից աղմկոտ ձայներ։ Դասարանի դուռը բացվելով ներս են վազում իմ ծանօթ Սարօն ու Արօն. մեր գիւղի նորաբոյս «զաւառագիտոնները»։

Սիրալիր բարևելով դիմում են դէպի դահլիճում կախված մայր-ցամաքների քարտէզները։

Հետաքրքրութեամբ հետևում եմ նրանց բոլոր շարժումներին։

Առանց նախնական հարց ու փորձի ուզում եմ հասկանալ բանի էութիւնը։

Քարտէզի վրա տեղ են որոնում։ Երկու զոյգ յառած աչքեր և երկու զոյգ անհանգիստ ձեռներ հետախուզումներ են կատարում...

Վերջապէս գտան։ Յաղթական ժպիտ և ընկճված հայեացք։

— Տեհա՞ր,—անծայր ցնծութեամբ գոռաց Սարօն,—ո՞նց ես, ո՞նց, ո՞վ տարաւ. ո՞ւմ ասածը դվվեց։ Ես էիր կողքիդ ընկել. ե՛շդ էիր քշում։ Տե՛ս, տե՛ս, էս «Աւստրիան» է, իսկ էն, հեռու «Աւստրալիան» է։ Պարո՛ն,—դառնում է ինձ ուրախ դէմքով Սարօն,—գլխացաւանք եմ տալու, համա մի ականջ արա, ցաւդ տանեմ, մեզ, խանմաղներիս մի հալա լսիր, ղորթ ու սուտը ջոկիր...

Մօտենում եմ քարտէզին և ուշադրութեամբ լսում։

— Էս տնաշէնն, երէկվանից նախիցս կախվել է, թէ «մերոնց» դէմ Աւստրալիան է կռւում. հոգիս դուրս եկաւ, գլուխս տրաքվեց սրան համոզելուց, որ «մերոնց» դէմ քեալա տուողն Աւստրիան է. իսկ էն Աւստրալիա ասածդ մի հեռաւոր աշխարհ է, անգլիացիների թրի տակ, նրանց «կոռ ու բեգար» տուող... Ո՞ւմն ես ասում, ո՞ւմն ես համոզում. սա իր ասածն է զօրում։ Հմի էդ անտէր երկիրը գայիմ բռնել եմ. ձեռից չի փախչի։ Շուտ ասա, հոգուդ մատաղ, ո՞ւմ ասածն է դուզ, ո՞ւմն է ծուռ...

Հաստատում եմ Սարօյի ասածները։

Արօն ճնշված ու վհատված է։ Լուռ հեռանում է քարտէզի մօտից, գլխակոր անցնում է դահլիճի միւս կողմը։ Պատկերաւոր պաուզա։

— Լա՛ւ, լա՛ւ,—ընկճված տոնով ասում է Արօն,—ես մեղա՛յ, ես սխա՛լ. դո՛ւ ես ղորթ, դո՛ւ. քո տարածդ է. իմ հախս է. ականջներս թող կարմրեն, ջանս էլ թող դուրս գայ Խե՜ գոմերի, օդաների քօշաներից խրաղ չեմ լինում. խե՜ մարդամէջ չեմ երևում, գազէթներում գրածը նուրբ չեմ լսում, որ ճակատս բաց լինի, ձէնս կտրուկ, խօսքս բանի նման, որ ասածներս հալած եղի տեղ ընդունեն, որ էս օրվայ նման դու էլ մէջքս գետնին չը տաս, պարոնի առաջ չը խայտառակես։ Չէ, աղբէր, չէ, էն «վաղ էր, որ էշը կաղ էր»։ Էն անցաւ, կորաւ. հմիկվայ դարը խելահասների, աչքաբացների, գիտնականների դար է։ Վա՛յ եկել խանմաղներիս է տարել։

Աշխատում եմ պարտված Արօյին մխիթարել, սիրտ տալ, որ սխալվելն ամօթ չէ, որ այսպիսի հարցերում կրթվածներն անգամ ընկնում են նման թիւրիմացութեան մէջ եայլն եայլն։

Յաղթական դէմքով հեռանում է Սարօն. նրան հետևում է վշտացած Արօն։

Այսպիսի անմեղ վէճեր գիւղական կեանքում սովորական դէպքեր են։

⁂

Մայր հողի հետ ձուլված, միայն նրան երկրպագող, միայն նրա գոյութեան ջերմ նախանձախնդիր գիւղական ամբոխն այժմ արմատապէս կերպարանափոխել է իր մտաշխարհը։

Գեղջուկը հոգեպէս վերածնվում է։ Նրա մտածելակերպն ազատվել է կաշկանդումներից և բոլորովին նոր ուղղութեամբ որոնումներ է անում։

Նրա զգացողութիւնն ուժեղ թափ է ըստացել։

Ռազմաշունչ մթնոլորտում անհետ սուզվել է գիւղական անհատը։ Հալվել են նրա քարացած միտքն ու հոգին։ Ցեղաշրջվել է նրա նեղ աշխարհհայեացքն և եսասիրական ձգտումները։ Հանդէս է եկել խորհող գիւղացին, հեռատես երկրագործը և հայրենասէր հայը։

— Ա՛յ խալխ,—տխրաձայն ասում է ծերունի «Աթօ-Ամին» հրապարակում ժողոված գիւղացիներին,—վա՜յ մեր գլխին քարն ընկնի. էս ի՞նչ հասանք. էս ինչե՞ր տեսանք... Բա մեր սիրուն վաթանը մի գլուխ ցաւի տակ պտի մնա՞յ ու փոթոթվի։ Արին ու շիվան, ալան ու թալան, մահ ու զուլում հայ-քրիստոնեայի անբաժան ընկերը պտի լինի... Էս ամենն ո՞ւր կը տանի, ո՞ւր կը հասցնի մեզ, ո՞ւր... Մի վախտ մեր «խելօքներն» ասում էին, թէ աշխարհս պտի կործանվի, հողի հետ հաւասարվի։ Մարդկանց հմիկվայ արարմունքն աշխարհի կործանում չի, բա ինչ ցաւ ու գրող է... Վա՜յ մեզ, վա՜յ մեր օրդոց... Դուզն ասած, մենք աղամորդիքս, Աստուծոյ երկնքի տակ, էս դրախտանման օդն ու ջուրը վայելելու հէչ արժանի չենք, հէչ... Էն սարերի ու քոլերի վիրանի հայվանները մեզնից ռամով են, մեզնից աստուածավախ... Չէ, չէ, մենք գազազած ջանաւարներ ենք, ջանաւարներ...

Մեծ-Ղարաքիլիսա Репортеръ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կովկասի ուսումնարանական շրջանի դպրոցների հոգաբարձու Ռուդոլֆը ուղարկել է մի շրջաբերական դպրոցական տարին վերջացնելու վերաբերմամբ։

Այդ շրջաբերականի համաձայն՝ տղայոց և աղջկանց միջնակարգ դպրոցներում բոլոր դասարաններում զբաղմունքները վերջանալու են մարտի 14-ին։ Միայն քննութիւնները կը տևեն՝ ստորին դասարաններում մինչև 14, միւսներում մինչև մարտի 16, 17 և 18-ը։ Ընդունելութեան քննութիւնները նշանակվելու են մարտի 27-ին և 28-ին։

Բարձր տարրական դպրոցներում զբաղմունքները վերջանալու են մարտի 14-ին, իսկ քննութիւնները կատարվելու են մարտի 30-ից մինչև ապրիլի 20-ը։

Տարրական դպրոցներում զբաղմունքները վերջանալու են Զատկին։ Բոլոր աշակերտները արձակվելու են մինչև սեպտեմբերի 1-ը, բացի աւարտողներից, որոնց քննութիւնը կատարեալ չափով տևելու է մինչև ապրիլի 15-ը։

Իսկ Անդրկովկասի երկաթուղային դպրոցների զբաղմունքների և քննութիւնների մասին առանձին կարգադրութիւն կը լինի։

Գանձակի ուսուցչական սեմինարիայի զբաղմունքները տևելու են մինչև ապրիլի 20-ը, իսկ քննութիւնները ամսի վերջերից մինչև մայիսի 1-ը։

Աւարտողները քննութիւն պէտք է տան միայն իրանց անցած առարկաներից։

ԻՇԽ. Վ. Լ. ԳԵԼՕՎԱՆԻՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

«Рус. Вѣд.»-ում տպված է մի յօդուած հանգուցեալ Գելօվանիի մասին, որի մէջ յօդուածագիրը խօսում է մարդասէր իշխանի արած գործերի մասին, Անդրկովկասի բնակիչներից վայելած յարգանքի մասին, և յետոյ կցում է.

«Իշխան Գելօվանին օգնութեան ձեռք էր մեկնում ոչ միայն քաղցածներին ու հիւանդներին, այլ նա իր պարտքն էր համարում ամենուրեք պաշտպանել մարդկային արժանապատւութիւնը և հայերի ազգային իրաւունքները։ Երբ—այդ՝ Թիւրքիայի հետ պատերազմ սկսելու օրերին էր—հայ ժողովուրդը կանգնեց որպէս մի մարդ, երբ հարիւրաւոր կամաւորներ արդէն մտել էին մեր զօրքերի շարքը, իսկ հազարաւորներ թափվում էին Թիֆլիս, ինչ-որ մութ մարդկանց կողմից լուր բաց թողնվեց այն մասին, թէ ձախ ձեռքից վիրաւորները մեծ մասամբ հայ զինուորներ են, թէ իբր իրանք են իրանց գնդակով վիրաւորել։ Այդ լուրերով կամենում էին պրովոկացիայի ենթարկել թուրքերին՝ Բագւում, վրացիներին՝ Թիֆլիսում։ Հասունանում էր մի սարսափելի բան, որի մասին վախենում էին խօսել։ Եւ այդ րոպէին հնչեց մի ուժեղ, հաստատ և համարձակ ձայն։ Իշխան Գելօվանին, գալով Թիֆլիս, յայտնեց, որ բոլոր այդ լուրերը զզուելի զրպարտութիւն են Ռուսաստանի թշնամիների կողմից։ Մի փոքր անց՝ Պետական Դումայի պատգամաւոր Պապաջանեան հանդիպեց Գելօվանիին և լսեց նրա բողոքը հայերի վրա բարդված մեղադրանքի առիթով»։

Պապաջանեանը յօդուածագրին ասել է Գելօվանիի մասին հետևեալը. «Այնպիսի մարդու հետ, որպիսին է իշխան Գելօվանին, կարելի է կտրել հայ-վրացական տարաձայնութիւնների հանգոյցը, և մենք, Աստուծով, կը կտրենք այն»։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գաղթականների տառապանքի մասին

Էջմիածին, 21 փետր.

Շարունակվում է գաղթականութիւնը իր անծայր ողբերգութեամբ. գալիս են նոր խմբեր՝ սառած դիակներով և թախծոտ, անէծքով լի հայեացքներով... Անկարելի է սառնութեամբ և անտարբերութեամբ վերաբերվել և տեսնել մի ամբողջ ժողովրդի այս սարսափելի տառապանքը, որի մասին առաջ միայն լսել էինք, զարմանում էինք ըստ լսելու, իսկ այժմս, երբ իրականութիւնն է այդպէս արձանանում մեր առաջ, դաժան մարդն իսկ կը փափկանայ և կը համակվի տառապողների տանջանքով։

Եւ դեռ մինչև այսօր գալիս են այդ գաղթականները, գալիս են առանց շորերի և հագուստի, գալիս են օրերով քաղցած, գալիս են ունենալով 40° տաքութիւն և տիֆով հիւանդ։ Շատերին հնար չէ լինում տեղաւորել հիւանդանոցներում. ուղարկում են Երևան և գիւղերը։ Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Կոմիտէն ամեն հնար գործ է դնում թեթևացնելու գաղթականների տառապանքը։ Նրանց ապագան անորոշ է և մութ։ **

31 կով այրված

Վերին-Աղդան (Ղազախի գ.), 18 փետր.

Ամսիս 17-ի գիշերը Վերին Աղդանի, «Ջլոչրու» մաղրայում հրդեհ ընկաւ Յովհաննէս Յարութիւնեանի գոմը, որից այրվեց գոմում եղած 31 կովը. դրանցից 24-ը արդէն սատկել են, իսկ միւսները կիսակենդան դրութեան մէջ են։ Աղդանցի

Մեր իրականութիւնից

Խանքենդ, 16 փետր.

Ահա երրորդ ամիսն է, ինչ այստեղ բնակութիւն է հաստատել կառավարութեան կողմից շրջիկ ագրոնոմ, որը շրջում է գիւղերը և, տեղն ու տեղը ծանօթանալով գիւղացիների վարած տնտեսութեան ձևերի հետ, հարկաւոր ցուցմունքներ է տալիս։ Արդէն տեղումս գիւղատնտեսական գործիքների պահեստ է բացված. մի քանի գործիքներ՝ որ աւելի անհրաժեշտ են՝ բերված են և դեռ պէտք է ստացվեն առաջիկայում՝ աւելի մեծ մեքենաները։

Մտադրութիւն կայ նաև ինչպէս տեղումս, նոյնպէս և մի քանի ուրիշ գիւղերում փորձնական դաշտեր ունենալ, որոնց միջոցով կարելի լինի գործնական կերպով գիւղացիներին ծանօթացնել նոր ձևի գործիքները բանեցնելու եղանակի և հողը մշակելու կանոնների հետ։

Պէտք է ասել, որ յիշեալ ագրոնոմը հայ լինելով՝ մեր գիւղացիների կեանքին բաւական ծանօթ է, գիտէ և թուրքերէն լեզուն, այնպէս որ իր անմիջական ցուցմունքներով մեծ օգնութիւն կարող է ցոյց տալ գիւղացիներին՝ բոլորին անխտիր։

Ա. Ասլանեան

Իշխան Գելօվանիի թաղման հանդէսը

Քութայիս, 27 փետրվարի

Երէկ տեղս հասաւ հանգուցեալ իշխան Գելօվանիի մարմինը։

Դեռ առաւօտեան ժամը 11-ից երկաթուղու կայարանի հրապարակը և մօտի փողոցները լցված էին հոծ բազմութեամբ, որը հետզհետէ ստուարանում էր։

Ժամը 2-ին հասաւ մարմինը, և մեծ շքով ու հանդիսաւորութեամբ սկսվեց յուղարկաւորութիւնը։

Յուղարկաւորութեանը մասնակցում էին՝ համքարների դասն իրանց դրօշակներով, ազնուականների գիմնազիայի աշակերտները՝ ուսուցիչներով և նուագախմբով, արական և իգական երգեցիկ խմբեր, քաղաքային դպրոցների աշակերտներն իրանց ուսուցիչներով, քաղաքային դումայի ամբողջ կազմը և շատ բարձրադիր անձնաւորութիւններ։ Սգերթի առաջից ձեռքերի վրա տանում էին մօտ 50 պսակներ, որոնցից 7-ը արծաթեայ էր և մի քանիսը մանիշակէ մեծ խաչերից։

Շատ ժամանակ է՝ Քութայիսը այսպիսի հանդէս չէ տեսել։ Ս. Նազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ինչպէս յայտնի է, «Մշակի» խմբագրութիւնը հեռագրով շնորհաւորել էր փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի 10-ամեայ փոխարքայական պաշտօնավարութիւնը։ Որպէս պատասխան այդ հեռագրի, կոմսից խմբագրութիւնս ստացաւ հետևեալ հեռագիրը.

Սրտանց շնորհակալ եմ լրագրիդ խմբագրութեանը շնորհաւորանքների համար։

◆ Տ. Նազարեան փոխարքայ Վորոնցով-

Դաշկովից ստացել է հետեւեալ հեռագիրը.

Շնորհակալ եմ «Աղբիւր» և «Տարազ» խմբագրութիւնից և Գրական-Գեղագիտական Սալոնից՝ շնորհաւորանքների համար։

◆ Փոխարքան իր տասնամեակի առիթով արված շնորհաւորանքների համար շնորհակալական հեռագիրներ է ուղարկել նաև Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան, Հայկական Կենտր. Կոմիտէտին, Թիֆլիսի ժողովարանին և այլն։

◆ Կիրակի, մարտի 1-ին, Ազատարար արքայ Ալէքսանդր II-ի մահվան տարեդարձի օրը զինուորական տաճարում Պիտիրիմ արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ հոգեհանգիստ կատարվեց։ Ներկայ էին փոխարքայի օգնականները, նահանգապետը և զինուորական ու քաղաքացիական շատ պաշտօնեաներ։

◆ Փետրվարի 28-ի երեկոյեան Թիֆլիս եկաւ Նորին Կայսերական Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի պահեստի գնացք-բաղնիս № 2-ը, որը գեղեցիկ կերպով կահաւորված էր։ Այդ գնացքին ուղեկցում է կոմս Լ. Ն. Իգնատիեվ։

◆ Հայ Երաժշտական Ընկ. համերգը, որ նշանակված էր այսօր, յետաձգվում է շաբաթ օրվան։

◆ Մի առանձին յանձնաժողով, որ կազմված էր Դիւսուքէի արքունական հողերը քննելու համար, այս օրերս վերջացրեց իր աշխատանքները այդ հողերի դօկումենտները և սահմանագծերը պարզելու նկատմամբ։

◆ Հանգուցեալ Գելովանիի ամուսնու առողջական դրութիւնը դէպի լաւն է գնում, ինչպէս հաղորդում է «Кавказъ»-ը։

◆ Միջնորդութիւն է յարուցված քաղ. վարչութեան առաջ, առողջապահական միջոցներ ձեռք առնել Նաւթլուղ կայարանում եղած կեղտոտութիւնների դէմ։ Երկաթուղագծերի արանքում վագոններից թափում են ձիու աղբ և հէնց այդտեղ էլ այրում շաբաթը մի անգամ։

◆ Մենք հաղորդել էինք, որ քաղաքային վարչութեան անդամ Մ. Աթաբէկեան հիւանդացել է. այժմ, ինչպէս լսում ենք, առողջացել է և մտել իր պարտականութիւնների մէջ։

◆ Մարտի 15-ին քաղաքը գնելու է Անօնիմ Ընկ. պատկանող էլեկտրաքարշը։ Այդ պատճառով Թիֆլիս են եկել ընկերութեան ներկայացուցիչներ Ի. Ֆայն և Մ. Րիդլիօնսկի։

◆ Երեք օրվայ մռայլ, անձրեւային եղանակներից յետոյ, եղանակը նորից վերականգնեց։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Պետրօգրադից հեռագրում են, որ փետր. 26-ին այնտեղ ի պատիւ հռչակաւոր գիտնական Մաքսիմ Կովալևսկիի բանկէտ է տրվել։ Ներկայ են եղել Պետ. Խորհրդի շատ անդամներ, Պետ. Դումայի պատգամաւորներ, պրօֆեսորներ և հասարակական գործիչներ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Ակակի Ծերեթելիի անունը և յիշատակը ժողովրդի մէջ կենդանի պահելու նպատակով երկու օգտակար առաջարկ ևս է արված։ «Սախալի Քարթլի» լրագրի մէջ պ. Ջափարիձէն առաջարկում է Գորի քաղաքում Ակակիի անունով հիմնել ժողովրդական տուն, իսկ «Սախ. Փուրց.» լրագրում Ն. Թուղգերիձէն առաջարկում է հիմնել մի հաստատուն ֆոնդ սակաւահող վրացի գիւղացիներին հող ձեռք բերելու հնարաւորութիւն տալու նպատակով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Сборникъ Дипломатическихъ Документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года. Изд. Министерства Иностр. Дѣлъ Петроградъ, 1915 г.

(Ժողովածու Դիպլոմատիական Դօկումենտների։ Րէֆօրմները Հայաստանում։ 26 նոյեմբեր 1912 թ. սկսեալ ց10 մայիս 1914 թ.։ Հրատար. արտաքին գործերի մինիստրութեան)։

X

Նարնջագոյն Գրքի 47-րդ դօկումենտն է Գիրսի հեռագիրը Սազօնովին, յունիսի 3-ին, թէ Կ. Պոլիս եկած գերմանացի արեւելագէտ Լեպսիուսը այցելելով հայոց պատրիարքին՝ հաւատացրել է նրան, որ գերմանական կառավարական շրջանները խիստ համակրութեամբ են վերաբերվում հայերին։

48-րդ՝ դարձեալ Գիրսի հեռագիրն է Սազօնովին, յունիսի 4-ին, թէ ինքը յանձնարարել է դեսպանատան աւագ թարգմանին մշակել Հայաստանի րեֆօրմների նախնական ծրագիր, ղեկավարվելով գլխաւորապէս 1880 և 1895 թ. թ. ծրագիրներով, և թէ այդ օրը Մանդելշտամի ծրագիրը առանց էական փոփոխութիւնների ընդունվել է երեքակ համաձայնութեան պետութեանց դեսպանների կողմից։ Դեսպանը կրկին անգամ յայտնում է, որ խիստ ցանկալի կը լինէր երեքակ համաձ. ներկայացուցիչների հրահանգները փոխվէին այն մտքով, որ Թիւրքերին թոյլ չը տրվի մասնակցել ծրագրի նախնական կազմութեանը։

49-րդը՝ Սվերբէեվի գրութիւնն է Սազօնովին, յունիսի 6-ին, որով դեսպանը յայտնում է, որ Եագօվը կրկին անգամ մատնանշում է, թէ հայկական րեֆօրմները չը պէտք է վնասեն սուլթանի գերիշխանութեանը և Թիւրքիայի ամբողջութեանը։

50-րդ՝ Գիրսի գրութիւնն է Սազօնովին, յունիսի 8-ին, թէ երեքակ համաձայնութեան ներկայացուցիչները աննշան փոփոխութիւններով ընդունեցին Հայաստանում մտցվելիք բարենորոգումների նախնական ծրագիրը։ Այս ծրագիրը ամբողջովին տըպված է իր ժամանակին «Մշակում» (1913 թ. №№ 216, 217 և 218)։

51-րդը՝ Սվերբէեվի հեռագիրն է Սազօնովին, թէ գերմանական ստատս-սեկրետարը, որ Թիւրքիայի ամբողջութիւնը պահպանելու համար ինքը թէև կողմնակից էր Թիւրք ներկայացուցչի մասնակցութեան րեֆօրմների քննութեան գործում, այժմ չի պնդում այդ բանի վրա։

52-րդ՝ Սազօնովի օգնական Ներատովի հեռագիրն է Գիրսին, յունիսի 14-ին, թէ ինքը Թուրխան-փաշայի (Պետրօգրադի թիւրքաց դեսպանի) ուշադրութիւնն է հրաւիրել, որ Բ. Դուռը առանց Ռուսաստանի գիտութեան ոչինչ չը ձեռնարկի։

53-րդ՝ Գիրսի հեռագիրն է Սազօնովին, յունիսի 17-ին, թէ այդ օրը կայացել է մեծ պետութիւնների դեսպանների գումարած նիստը՝ Հայաստանի րեֆօրմների քննութեան համար։ Թիւրքական ծրագրի քննութիւնը, դեսպանի առաջարկութեան համաձայն, թողնվել է։ Բացի այդ՝ պայմանաւորվել են, որ այդ նիստը ունենալու է վստահելի բնաւորութիւն։

54-րդ՝ դարձեալ Գիրսի հեռագիրն է Սազօնովին, յունիսի 19-ին, որով նա յայտնում է, թէ Թիւրքիան շրջաբերական հեռագիրներ է ուղարկել թիւրքական դեսպաններին, որոնց մէջ յիշում է Թիւրք կայսրութեան ընդհանուր բարենորոգումների մասին, մասնաւորապէս անգամ չը յիշելով Հայաստանի մասին։ Շրջաբերական հեռագիրը յայտնում է, որ կայսրութիւնը բաժանվում է վեց սեկտորների (առանձին մասերի), ըստ որում «արեւելեան վիլայէթները» բաժանվում են երկու սեկտորի, որոնց սահմանները չեն որոշված։ Դեսպանը երկիւղ է կրում, որ այդպիսով ուզում են հայերին բաժանել և տարրալուծել Թիւրք մեծամասնութեան մէջ։ Դեսպանը յայտնում է, թէ որովհետեւ Բ. Դրան ներկայացրած ծրագիրը չի շօշափում դեսպանների առաջարկած րեֆօրմները, այդ դէպքում դեսպանները պէտք է առաջվայ պէս ելակէտ ընդունեն ռուսական ծրագիրը։

(Կը շարունակվի)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Դրամա

Բարատովի ռուս դրամատիկական խումբը մարտի 1-ին Արտիստական Ընկ. թատրոնի բեմի վրա ներկայացրեց Բէրնարդ Շօուի «Պիգմալիօն» 5 գործ. կոմէդիան։

Համարեա 12 դար անցել ունեցող յունական լեգէնդան է Կիպրոսի արքայ Պիգմալիօնի մասին, որ նիւթ է ծառայել շնորհալի գրող-դրամատուրգ Շօուին ստեղծագործելու իր կոմէդիան ժամանակակից անգլիական մօրալի ու դեմօկրատիկ խաւերի հարազատ գծերի ցայտուն արտայայտութեամբ։ Յունական լեգէնդայի հերոս Պիգմալիօնը քանդակագործեց փղոսկրից կնոջ արձան, որին յետոյ Աֆրոդիտը կենդանութիւն տուեց, որից յետոյ Պիգմալիօնը ամուսնացաւ նրա հետ։ Բէրնարդ Շօուի Պիգմալիօնը՝ անգլիական արիստոկրատիայի հարազատ ծնունդ պրօֆէսոր Հէնրի Խիգինս է, որ վերցնում է փողոցային ծաղկավաճառ դեռատի օրիորդ Էլիզային իր մօտ դաստիարակելու։ Եւ ժողովրդի ծոցից դուրս եկած ազատ, անհոգ, կենսուրախ Էլիզան կաշկանդվում է բարձր շրջանի միակողմանի շրջապատի մէջ, որի մօրալը պահանջում է արտաքին կեղծ ու արհեստական շարժումներ, արտասանութիւն, վարվեցողութիւն ու այլ ձևական համակերպումներ...

Վերջ ի վերջոյ, սակայն, պրօֆեսորը, տանելով իր ըմբոստ աշակերտուհու միամիտ արարքները, յափշտակվում է նրա բիւրեղացած ինտելէկտուալ հոգեկան յատկութիւններից, գեղեցկութիւնից, թարմութիւնից, անկեղծ զգացմունքներից և դարձնում է իր սիրոյ առարկան...

Պիէսի մէջ հանդէս են գալիս նաև այլ գործող անձեր, յանձին որոնց պիէսի հեղինակը ռելիէֆ գծերով ու առողջ հումորով պատկերացնում է անգլիական արիստոկրատիայի մտաւոր ու հոգեկան բովանդակ անանկութիւնը և դեմօկրատիկ մասսաների բնաւորութեան յատկանիշ կողմերը։

Սկզբից մինչև վերջ Բէրնարդ Շօուի կոմեդիան դիտվում է անընդհատ հետաքրքրութեամբ ու թողնում է իր բովանդակութեամբ և բեմայարդարումով հաճելի տպաւորութիւն։

Այդ գիշեր թատրոնը ծայրէ ի ծայր լցրած հասարակութեան համար պիէսի ընտրութիւնը աւելի արժէքաւոր դարձաւ տաղանդաւոր դերասանուհի Իւրենէվայի և դերասան Բարատովի մասնակցութեամբ ու առհասարակ ընտրովի անսամբլով։ Տիկին Իւրենէվան Էլիզայի դերը մտածված է տանում, ամբողջացնելով փողոցային ծաղկավաճառ և յետոյ արիստոկրատ հասարակութեան «անդամ» դարձած այդ աղջկայ դերը, որի պարզ ներքինը չէ համակերպվում արտաքին արհեստականութեան հետ։

Ոչ պակաս տաղանդաւոր ու կոլորիտ պատկերացումով խաղաց Բարատովը պրօֆէսորի տիպիկ դերը։

Երկու դերակատարները արժանացան բուռն ծափահարութեան և ստացան շատ ծաղկեպսակներ։

Լաւ էին նոյնպէս Բէլեաեվը՝ Էլիզայի հօր, Կրուչինինը գնդապետի, տ. Վօլիօվսկայան՝ պրօֆեսորի մօր դերերում։

Ռեցէնզէնտ

ՍՐՏԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ,

ճարպակալումը, սրտի սկլէրօզը, սրտի բաբախումը եւ թանչոցը, նէվրաստէնիան եւ ջղային հիւանդութիւնները, սեռական թուլութիւնը, զառամութիւնը, հիւծուածութիւնն ու նիհարութիւնը մեծ աջողութեամբ բժշկում է Սպէրմին-Պէլը, որի մասին վկայում են աշխարհիս ամենայայտնի բժիշկների բազմաթիւ դիտողութիւնները գրականութեան մէջ։

Սպէրմին-Պէլը միակ իսկական, բազմակողմանի փորձված Սպէրմինն է. այդ պատճառով էլ պէտք է ուշադրութիւն դարձնել՝ „ՍՊԷՐՄԻՆ-ՊԷԼԻ„ անուան վրա և չը գնել կեղծվածները, հեղուկներ և սերմային գեղձերից պատրաստված մահլամներ, որպէս անպէտք նմանողութիւններ, որոնք թէ յատկութեամբ և թէ ներգործութեամբ Սպէրմին-Պէլի հետ ոչ մի առնչութիւն չունեն և յաճախ պարունակում են առողջութեան համար վնասակար տարրեր։

Ցանկացողներին ուղարկվում է ձրիաբար «Цѣлебное дѣйствіе Спермина» գիրքը. ամբողջ օրգանոտէրապիայով հետաքրքրվողներին ուղարկվում է՝ 4 հատ 7-կոպէկանոց նամականիշ ստանալուց յետոյ՝ նոր լոյս տեսած «Цѣлительныя силы организма» գիրքը։

Սպէրմին-Պէլին կայ ամենուրեք։

(№ 1) (П. 2965) 12—3

Профессоръ Д-ръ ПЕЛЬ и С-вья
С.-Петроградъ.
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾ. Դրան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 27 փետրվարի

Աշոտ Մնդոյեան խմբագրութեանս նուիրած ունենալով 25 ր., սրանով յայտնում ենք, որ այդ գումարով խմբագրութիւնս որոշել է 20 գրադարանի մի տարվայ գիրք ուղարկել։ Այն գրադարանները, որոնք «Պատանին» չեն ստանում, թող իրանց հասցէն ուղարկեն մեզ, որպէս զի կարողանանք արդէն լոյս տեսած գրքերն ուղարկել։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Ходживанская, 5.

«Պատանիի» խմբագրութիւն

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Կօկանդի հայոց ծխ. դպրոցի հոգաբարձութեան

1912 թ. Կօկանդում «Մշակի» 40-ամեակի առիթով համակրողների շրջանում յօգուտ յիշեալ թերթի հանգանակվեց 204 ր., բայց ցաւելով պիտի ասեմ, որ շուտով կը լրանայ 3 տարին, այդ 204 ր. խմբագրութիւնը դեռ չէ ստացել։ 1913 թ. մայիսին հրապարակով պահանջեցի, որ անմիջապէս փոխադրվի այդ գումարը ըստ պատկանելոյն, բայց այդ պահանջը մնաց առանց հետեւանքի։ Նոյն թւին ճարտարապետ Խաչատրեանցը, որը նուիրել էր 50 ր., որպէսզի 5 օրինակ «Մշակ» ուղարկվէր Դահրաւ գիւղի հասարակութեան անունով, պահանջեց բացատրութիւն, թէ ինչու իր 50 ր. նպատակին չէ ծառայել, այդ բողոքն էլ մնաց անհետեւանք։ Մենք մեծ յոյս ունէինք, որ յիշեալ նամակները լոյս տեսնելուց յետոյ Կօկանդի ծխատէր Ներսէս ք. Աբրահամեանցը, որը նուիրատուներից մէկն է, հարկաւոր միջոցը ձեռք կառնէր և կը յորդորէր ում հարկն է, որ փողը անմիջապէս փոխադրվի խմբագրութեան, բայց նա չը գիտենք ինչու մատը մատին չը խփեց։ Մենք շատ լաւ գիտենք, թէ հաւաքված գումարի ով մասը ում մօտ է գտնվում. այդ մարդիկ հէնց հիմա էլ վայելում են Կօկանդի հայ հասարակութեան մեծագոյն մասի համակրութիւնը, ուստի յարգելով նրանց ունեցած պատիւը՝ նրանց անունները առ այժմ ի լուր աշխարհի չենք յայտարարում։ Ես իբրև նուիրատու բողոքում եմ և պահանջում եմ, որ այդ փողը փոխադրվի. ամօթ է հասարակութեան կոպէկները օր ցերեկով ուտելը։

Սրանով դիմում եմ յարգելի հոգաբարձութեանդ այդ առիթով ժողով գումարել. ձեզ էլ քաջ յայտնի է, թէ յանձնաժողովի անդամները ովքեր են և ում մօտ է գտնվում այդ 204 ր.։ Պահանջեք, որ անմիջապէս այդ փողը փոխադրվի, հակառակ դէպքում ստիպված պիտի լինենք նուիրատուներին բացիկներ ուղարկել։

Պ. Մանուչարեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Ղազվին, 10 փետրվարի

Պարսկական ժանդարմերին, որը կոզակների բրիգադից յետոյ՝ ներկայացնում է միակ կազմակերպված զինուորական ույժը շվէդացի օֆիցէրների ղեկավարութեան տակ, ներկայումս կազմալուծվելու ենթակայ է շնորհիւ պետական ֆինանսների ճըգնաժամային կացութեան։ Ժանդարմների ընդհանուր թիւը հասնում է 6000-ի, որի մի մասը հեծեալ, իսկ միւս մասը հետեւակ է։ Սրանց ղեկավարող շվէդացիների թիւը հասնում է 29 հոգու։ Տարեկան բիւջէն հասնում է մօտ 1,600,000 թումանի, որ հաւասար է ռուսական 2,880,000 ռուբլու։

Շվէդացի օֆիցէրները, տեսնելով որ պարսից կառավարութիւնը չէ կարողանում հարկ եղած դրամը վճարել իրանց, սկսեցին իրանք անձամբ ձեռնամուխ լինել ֆինանսական մինիստրութեան գործերին, ուղարկելով ժանդարմներ զանազան գիւղեր՝ հարկերը հաւաքելու և բերելու իրանց, ինչպէս և մի քանի այլ պետական հասութաբեր հաստատութիւնների եկամուտները հէնց մայրաքաղաքում գրաւեցին, որի պատճառով ֆինանսական մինիստրութեան գլխաւոր գանձապահ բէլգիացի Հէնսէնսը դադարեցրեց ֆինանսական մինիստրութեան գործունէութիւնը, որի արդիւնքն այն եղաւ, որ շվէդացի օֆիցէրութիւնը սպառնաց հեռանալ երկրից և ներկայացրեց անցեալ տարվայ 11 ամսվայ հաշիւը, որը դնում ենք այստեղ, ցոյց տալու համար թէ որքան իրաւունք են ունեցել շվէդացի օֆիցէրները։

Առաջին 6 ամս. մէջ ծախսված է 6.826,218 ղրան, երկրորդ 5 ամսվայ մէջ ծախսված է 6,573,474 ղրան, 11 ամսում շվէդացի օֆիցէրներին ռոճիկ տրված է 916,475 ղրան. գումարը 14.316,167 ղրան։

Ֆինանսական մինիստրութիւնից ստացված 10.316,052 ղրանը հանելով եղած ծախքերից, դեռ ես պիտի վճարվի շվէդացի օֆիցէրներին 4.000,115 ղրան, որի մէջ է և իրանց ու ժանդարմների ռոճիկի կէսից աւելին։ Ուրեմն բիւջէի մի քառորդը դեռ անցեալ տարվանից չէ վճարված։ Անշուշտ այսպիսի հանգամանքում, երբ ռոճիկը չէ վճարվում կանոնաւոր կերպով, անարդարացի պահանջ չէ շվէդացի օֆիցէրութեան պահանջը իրանց ազատ կացուցանել պաշտօնից։

Կառավարութիւնը նեղը ընկած՝ ստիպված համաձայնութիւնը յայտնեց, որպէսզի առ այժմ արձակուրդի անուան տակ հեռանան նրանք, քանի որ կապված պայմանագրերը չեն արդարացնում շվէդացի օֆիցէրների ազատութիւնը իրանց պարտականութիւններից։

Շվէդացի օֆիցէրներից նրանք, որոնք շվէդական զօրքի օֆիցէրներ են համարվում, հեռանում են Պարսկաստանից փետրվարի վերջին։ Հեռացողներն են գեներալ Եալմարսօն, 8 հոգի ուրիշ օֆիցէրներ և պլաններ նկարող երկու օֆիցէր. իսկ առ այժմ մնում են 16 հոգի ոչ-պաշտօնի մէջ գտնվող օֆիցէրներ, մի բժիշկ և մի անասնաբոյժ։

Կը կազմալուծվի՞ արդեօք ժանդարմերին թէ ոչ, հաստատ չի կարելի ասել. միայն նա գտնվում է այդ վիճակի նախօրեակին. և եթէ այս վիճակի վրա աւելացնենք և այն, որ ռուս-անգլիական կառավարութիւնները համակրանքով են վերաբերվում դէպի այս զօրամասը, որը շնորհիւ շվէդացիների կազմւում է ռուս-անգլիական պրեստիժի դէմ եղող ույժերից մէկը, այն ժամանակ կարելի է ասել, որ վերոյիշեալ կառավարութիւնների մօտալուտ դիպլոմատիական յաղթանակը պիտի չքացնէ Պարսկաստանից այդ մութ ույժը և նրա տեղ անշուշտ պիտի կազմվի աւելի յուսալի զօրամաս։

Ժանդարմերիայի կազմալուծման վիճակը կառավարութեան շատ լաւ յայտնի լինելով, արդէն սկսել է նորից հին ձևի սարբազ հետիոտն զինուորների զորակոչը, և այժմ ամենուրեք կարելի է այդ սարբազներին հանդիպել. միակ փոփոխութիւնը սարբազի վրա՝ նրա գլխարկի փոփոխութիւնն է, որ հին գլխարկների տեղ ծածկել են շվէդական զինուորական գլխարկներ։

Ս. Ցովեան

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 10 ժ. 23 ր. երեկ.
» Բօրժօմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից — 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից — 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 6 ժ. 53 ր. առաւ.
Բօրժօմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինի, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏԵՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և [illegible]։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. [illegible] և [illegible] ներքին և հիւ. և [illegible]։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—35

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեօնովսկայա փող., № 18 (Վօրօնցովի արձանի մօտ)։ Բժշկի բնակարանը Սեմեօնովսկայա, № 16.
(Հ. ու. Վ.) 1018. 100—39

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎԵԱՆ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն.
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, [illegible]
[illegible]
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կատարել տալ, կամ բրօշիւրները շինել, ու այնու յանձնել:
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԵՍ-ԿՈՒՐԱՆՏ ԳՆԵՐՈՎ:
Տելեֆօն № 67.

Թիֆլիսի „ԳԻՐ“ եւ „ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“ գրախանութներում
վաճառվում են նոր լոյս տեսած
1) Ս.ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ IV տպ.
Նոր յաւելուած—«նայեաց սիրով» և այլն, գինը 20 կոպ.։
2) ՑՈՒՇԱՐՁԱՆ Արմաւրի քառ. երգեցիկ խմբի
Պատմական ակնարկ՝ չերքեզների, կօզակների, չերքեզահայերի և Արմաւրի քառ. խմբի վերաբերեալ, գ. 1 ր.
Կազմողի հասցէն՝ ТИФЛИСЪ, Михайл. пр. № 38. Учителю С. Шаaняну.
(Տ.) 119. 2—1

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.